ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա - ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ (ներկայացվում է առանձին)

ՀԱՎԵԼՎԱԾ Բ - ՀԱՅՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎ

ՀԱՎԵԼՎԱԾ Գ - ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ԳՆԱՑՈՒՑԱԿ

ՀԱՎԵԼՎԱԾ Դ - ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Ե - ՁԵՎԵՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՎԵԼՎԱԾ Զ - ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2003 թվականի
հոկտեմբերի 30-ի N1444-Ն որոշման

Հայաստանի Հանրապետություն

ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին փոխանցելու

2003 թ., օգոստոս

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

Ցուցումներ հայտ ներկայացնողների համար

ՄԱՍ 1 - ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

1.1 Ընդհանուր դրույթներ

1.1.1. «Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի» շրջանակներում ՀՀ կառավարությունն՝ ի դեմս Ջրային տնտեսության պետական կոմիտեի, Համաշխարհային Բանկի (ՄՁԲ) հետ համատեղ կազմակերպում է բաց մրցույթ՝ «Հայջրմուղկոյուղի» ընկերության (այսուհետ՝ ՀՁԿԸ կամ Ընկերություն) սպասարկման տարածքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի ինժեներական ենթակառուցվածքների կառավարման, շահագործման և վերանորոգման, ինչպես նաև ջրամատակարարման ու ջրահեռացման ծառայությունների իրականացման համար ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում աշխատանքային փորձ ունեցող ընկերություն կամ ընկերությունների կոնսորցիում (այսուհետ՝ «Կառավարիչ») ընտրելու համար: Նման ճանապարհով ընտրված «Կառավարիչը» Ընկերության հիմնադրի՝ ջրտնտեսկոմիտեի հետ կկնքի ՀՁԿԸ-ի կառավարման չորս տարվա պայմանագիր, որը ՄՁԲ-ի կողմից տրամադրվող «Աղապտացման վարկի» առաջին տրանշից հետո ավտոմատաբար կերկարացվի եւ երկու տարով վարկային համաձայնագրով սահմանված պայմանների կատարման դեպքում: Հիշյալ պայմանագրի ձևը և բովանդակությունը պետք է սկզբունքորեն համապատասխանեն սույն մրցույթի հրավերի (ՄՀ) հավելված «Ա»-ում ներկայացված պայմանագրի նախագծի (այսուհետ՝ «պայմանագրի նախագիծ») ձևի և բովանդակության հետ: «Կառավարչի» ընտրությունն իրականացվելու է մրցութային հիմունքներով (այսուհետ՝ մրցույթ) ՄՁԲ-ի կողմից ընդունված QCBS[1] մեթոդով:

1.1.2. ՀՁԿԸ-ի սպասարկման տարածքներում (տես՝ «պայմանագրի նախագծին» կից Առդիր 4) խորհրդատվական կազմակերպությունների կողմից վերջին տարիների ընթացքում անցկացվել են տեխնիկա-տնտեսական, ինստիտուցիոնալ և մասնավոր սեկտորի մասնակցության հարցերին առնչվող բազմաթիվ ուսումնասիրություններ: Այդ ուսումնասիրությունների արդյունքները ներկայացված են հետևյալ հաշվետվություններում.

ա) ՀՁԿԸ սպասարկման գոտիներում մասնավոր սեկտորի մասնակցության այլընտրանքները, 1-ին փուլի հաշվետվություն, տնտեսական, տեխնիկական և կադրային հարցերի վերաբերյալ հավելվածներով, մարտ 2003թ., ICEA,

- Տնտեսական և ֆինանսական հարցեր - 2001թ. և 2002թ. առաջին կեսին (ICEA),
- Կադրերի հաշվեգրում - 2002թ. երրորդ եռամսյակում (ICEA),
- Տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների նկարագրությունը - 2002թ.,

[1] Ընտրություն որակի և գնի հիման վրա

բ) Գլխամասային կառույցների հաշվեգրում և գնահատում մեկ մասնաճյուղի մակարդակով, AUCON, 2002թ.

գ) ՀՋԿԸ-ի ֆինանսական աուդիտ 2000 և 2001թթ., Գրանտ Թորնթոն Ամյո, 2002թ.,

դ) Ջրաչափման ծրագրի նախապատրաստում, Կոմունինախագիծ, 2002թ.,

ե) Սոցիոլոգիական հարցում, «Սոցիոմետր», 2002թ.,

զ) Շրջակա միջավայրի կառավարման պլան, Սեդ Մարսեդ և Գեոռիսկ, 2002թ.,

է) CH2M Hill-ի կողմից կատարված ուսումնասիրությունը, 1998թ.

Այն ուսումնասիրությունները, որոնք ներկայացված են «ա» - «զ» կետերում, պատվիրվել են ՀՀ կառավարության կողմից սույն մրցույթի հրավերի նախապատրաստման համար: ՀՀ կառավարությունը սակայն չի երաշխավորում դրանցում ներկայացված տեղեկությունների բացարձակ հավաստիությունը (տես ՄՀ 3.10.2 կետը):

1.2 Ծրագրի իրականացման կազմակերպումը

1.2.1. Ջրտնտպետկոմիտեն մրցույթի հաղթողի հետ կկնքի պայմանագիր՝ ՀՋԿԸ-ի, նրա մասնաճյուղերի, բոլոր տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների կառավարման, ինչպես նաև ՀՋԿԸ բոլոր սպասարկման գոտիներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների իրականացման մասին: Պայմանագիրը կկնքվի սույն փաստաթղթի 1.1.1 պարբերության մեջ սահմանված ժամկետով:

1.2.2. Ջրտնտպետկոմիտեն, ՀՋԿԸ բաժնետերերի ընդհանուր ժողովը և ծրագրի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Կառավարման խորհուրդը), իրենց իրավասության ու պարտականությունների շրջանակներում և պայմանագրի ողջ տևողության համար, կառավարչին հանձնարարելու են ընկերության պատասխանատվության տակ գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների կառավարումը և հսկողությունը: Կառավարման խորհուրդը կառավարչին հանձնարարելու է ընկերության աշխատակազմի («տեխնիկական անձնակազմ») կառավարման և վերահսկողության իրավասությունը: Կառավարման խորհուրդը կառավարչին հանձնարարելու է նաև ՀՋՋ ծրագրի շրջանակներում կապիտալ ֆոնդից ֆինանսավորվող կապիտալ ներդրումների կառավարումը:

1.2.3. Կառավարման խորհուրդը, որը նախագահում է ջրտնտպետկոմիտեի նախագահը և որը կազմված է ջրտնտպետկոմիտեի, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և այլ համապատասխան նախարարությունների ու գերատեսչությունների ներկայացուցիչներից, ընտրելու է կառավարչին, նրա հետ բանակցություններ է վարելու պայմանագրի վերաբերյալ և ՀՀ կառավարության անունից վերահսկելու է կառավարչի հետ պայմանագրային հարաբերությունները: Կառավարման խորհուրդը նաև որոշում է կառավարչին տրվող խրախուսավճարի չափը:

1.2.4. Կառավարման խորհուրդը ձևավորում է համապատասխան մասնագետներից կազմված մարմին՝ «Պայմանագրի վերահսկման գրասենյակ» (ՊՎԳ) և լիազորում է նրան օժանդակել Կառավարման խորհրդին սույն պայմանագրի շրջանակներում ծրագրի կոորդինացման և վերահսկման լիազորությունների իրականացման հարցում:

1.2.5. ՊՎԳ-ի կողմից ընտրված անկախ աուդիտորը պարբերաբար կգնահատի կառավարչի կատարողականը՝ ելնելով կառավարման պայմանագրով սահմանված գնահատման չափանիշներից:

1.2.6. Ջրտնտպետկոմիտեն ՀՀ կառավարության անունից կոնօրինի ՄՋԸ-ի կողմից տրամադրվելիք վարկը և «կապիտալ ներդրումների ֆոնդը», որը պետք է ձևավորվի այդ վարկի միջոցներից ՀՋՋ ծրագրի շրջանակներում:

1.2.7. Կառավարչի ընտրությունն իրականացվելու է Համաշխարհային բանկի կողմից 1995թ-ի հունվարին ընդունված գնումների մեթոդաբանության (և դրանում կատարված փոփոխությունների ու լրացումների) համաձայն:

ՄԱՍ 2 - ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

2.1 Ընդհանուր դրույթներ

2.1.1. ՀՀ կառավարությունը դիմել է Համաշխարհային բանկի (այսուհետ՝ ՀԲ) խմբի մեջ մտնող Միջազգային զարգացման ընկերակցությանը (այսուհետ՝ ՄԶԸ) ՀՀ բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում ներդրումներ կատարելու նպատակով վարկ ստանալու համար: ՀՀ կառավարության կողմից տրամադրվող համաֆինանսավորման հետ միասին այս վարկը կազմելու է ՀՋՋ ծրագրի ֆինանսավորման հիմնական մասը, որն օգտագործվելու է՝

ա) ըստ պայմանագրի, կառավարման ծառայությունների համար սահմանված հաստատագրված վճարները ֆինանսավորելու և փաստացի կատարողականի հիման վրա Կառավարչին խրախուսավճար (այսուհետ՝ խրախուսավճար) տալու,

բ) ըստ Կապիտալ ֆոնդի, Կառավարչի օգտագործման համար ներդրումների ֆոնդ ձևավորելու և

գ) վարչակազմակերպչական կառուցվածքը բարելավելու, ֆինանսական ու տեխնիկական ստուգումներ անցկացնելու, պայմանագրի վերահսկման գրասենյակ և անկախ աուդիտոր ֆինանսավորելու համար Կառավարման խորհրդին և ջրոնտպետկոմիտեին տեխնիկական օգնություն տրամադրելու նպատակով:

2.1.2. Կառավարչի ընտրության մրցութային կարգը, որը սահմանված է սույն ՄՀ-ով, մշակվել է մրցույթների իրականացման համար Համաշխարհային բանկի մեթոդական ցուցումների համաձայն:

2.1.3. Միևնույն ժամանակ ջրոնտպետկոմիտեն դիմել է և շարունակելու է դիմել մի շարք միջազգային կամ տեղական կազմակերպությունների այս պայմանագրով չնախատեսված՝ ՀՋՋ ծրագրում ընդգրկված տարածքներում ենթակառուցվածքների այլ կապիտալ բարելավման ծրագրեր ֆինանսավորելու խնդրանքով:

2.2 Վճարումների կատարումը ՀԲ-ի կողմից

Վճարումները ՀԲ-ի կողմից կարող են կատարվել միայն ՀՀ կառավարության կողմից ներկայացված և ՀԲ-ի կողմից հաստատված հայտով՝ վարկային պայմանագրով սահմանված ժամկետների և պայմանների համաձայն, և բոլոր պարագաներում ենթակա են վարկային պայմանագրով սահմանված ժամկետներին և պայմաններին: Վարկային պայմանագրով արգելվում է վարկի հաշվից գումարներ հանել այնպիսի վճարումներ կատարելու համար, որոնք ՀԲ-ի հանոգմամբ արգելված են ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխի համաձայն ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի կողմից ընդունված որևէ որոշումով: Վարկային պայմանագրով սահմանված իրավունքներից և վարկի միջոցներից կարող է օգտվել միայն ՀՀ կառավարությունը:

2.3 Կառավարման ծառայությունների համար սահմանված հաստատագրված վճարը և խրախուսավճարը

2.3.1. Կառավարման ծառայությունների դիմաց պայմանագրի ժամկետի համար սահմանված հաստատագրված վճարը պետք է վճարվի պայմանագրով սահմանված կարգի համաձայն: Մրցույթի յուրաքանչյուր մասնակից իր հայտում պետք է ներկայացնի հաստատագրված վճարի սխեման՝ ՄՀ-ի պահանջների համաձայն:

2.3.2 «Կառավարման հաստատագրված վճարից» բացի «Կառավարիչը» կարող է ակնկալել նաև տարեկան կտրվածքով փաստացի կատարողականի հիման վրա տրվող խրախուսավճար: Փաստացի կատարողականի վրա հիմնված տարեկան խրախուսավճարը պետք է վճարվի պայմանագրով սահմանված կարգով: Մրցույթի մասնակիցները խրախուսավճարի վերաբերյալ ֆինանսական առաջարկ չեն ներկայացնելու:

ՄԱՍ 3 - ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՔԵԼԸ, ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ՄՀ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3.1 Ներածություն

3.1.1. Ջրտնտպետկոմիտեի կողմից սույն ՄՀ-ի հրապարակումը պաշտոնական հրավեր է, որով բոլոր շահագրգռված ընկերություններին կամ ընկերությունների կոնսորցիումներին առաջարկվում է ներկայացնել տեխնիկական ու ֆինանսական առաջարկներից բաղկացած հայտ: Այն ընկերությունները կամ ընկերությունների կոնսորցիումները, որոնք ունեն համապատասխան որակավորում, սույն ՄՀ-ով հրավիրվում են մասնակցելու մրցույթին:

3.1.2. Յուրաքանչյուր մասնակցի որակավորումը մրցութային գործընթացում քննարկվելու և հաստատվելու է ջրտնտպետկոմիտեի կողմից, սույն ՄՀ-ի 4.8 կետի համաձայն:

3.1.3. Մրցույթի իրականացման հետ կապված աշխատանքների ընթացքը ղեկավարվելու է ջրտնտպետկոմիտեի կողմից, որը ստորագրված պայմանագիրը ներկայացնելու է Կառավարման խորհրդի և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ջրտնտպետկոմիտեի կողմից ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ գնահատող հանձնաժողով) որոշումներ է կայացնելու մրցույթի հայտերի գնահատման և պայմանագրի կնքման հետ կապված հարցերի վերաբերյալ:

3.2 Մրցույթի հրավերի փաստաթղթերը

3.2.1. Կառավարչի կողմից մատուցվելիք ծառայությունների շրջանակը և դրանց բնույթը, կառավարման, շահագործման և պահպանման ենթակա օբյեկտները, հայտերը ներկայացնելու և մրցույթն անցկացնելու կարգը, ինչպես նաև պայմանագրի նախագծի պայմանները սահմանվում են սույն ՄՀ-ով: ՄՀ-ի փաստաթղթերը հետևյալն են.

ա) հայտեր ներկայացնելու առաջարկությունը,

բ) մրցույթի հրավերը,

գ) ՄՀ-ի հավելված Ա-ն – պայմանագրի նախագիծը, այդ թվում՝

1. պայմանագրի ձևը,
2. ընդհանուր պայմանները և
3. կառավարման պայմանագրի առդիրները,

դ) ՄՀ-ի հավելված Բ-ն – հայտային երաշխիքի ձևը,

ե) ՄՀ-ի հավելված Գ-ն – հայտ ներկայացնողի գնացուցակը,

զ) ՄՀ-ի հավելված Դ-ն – հայտ ներկայացնողի պարտավորագիրը,

է) ՄՀ-ի հավելված Ե-ն – ձևեր լրացուցիչ տեղեկությունների համար,

ը) ՄՀ-ի հավելված Զ-ն – ինքնակենսագրության ֆորմատը,

թ) ՄՀ-ի կամ դրա հավելվածների լրացումներ, եթե այդպիսիք հրապարակվեն ջրտնտպետկոմիտեի կողմից:

3.2.2. Ծրագրի մասին տեղեկատվական նյութը, որը տրամադրվում է ՄՀ-ի հետ միասին, ունի միայն ինֆորմացիոն նպատակ և պայմանագրի կամ մրցութային փաստաթղթերի մաս չի հանդիսանում: Ծրագրի մասին տեղեկատվական նյութում ներառված որևէ տեղեկություն չպետք է մասնակիցների կողմից համարվի բացարձակ հավաստի կամ ճշգրիտ:

3.2.3. Հայտերը պետք է ներկայացվեն անգլերեն լեզվով, և մրցույթի հետ կապված ամբողջ գրագրությունը պետք է վարվի անգլերենով:

3.3 Հայտերի մերժումը

3.3.1. Յուրաքանչյուր հայտ ներկայացնող պետք է ծանոթանա ՄՀ-ի փաստաթղթերում ներկայացված ցուցումներին, ժամկետներին, պայմաններին, ձևերին, բնութագրերին և այլ տեղեկություններին: Գնահատող հանձնաժողովը կարող է ներկայացված հայտը թերի ճանաչել և մերժել այն, եթե մասնակիցը.

ա) չներկայացնի ՄՀ-ով պահանջվող բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները կամ

բ) ներկայացնի այնպիսի առաջարկ, որն սկզբունքորեն չի համապատասխանում ՄՀ-ով սահմանված դրույթներին և պայմաններին:

3.3.2. ՄՀ-ի 3.3 կետի կոնտեքստում «սկզբունքորեն համապատասխանող» հասկացությունը նշանակում է, որ առաջարկն առանց նշանակալի շեղումների, հակասությունների, պայմանականությունների կամ վերապահումների համապատասխանում է ՄՀ-ով սահմանված բոլոր պահանջներին: «Նշանակալի շեղում, հակասություն, պայմանականություն կամ վերապահում» է համարվում մասնակցի առաջարկի այն դրույթը, որը.

ա) էապես փոխում է պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալը, որակը և կատարողական ստանդարտները,

բ) ՄՀ-ով սահմանված պայմաններին հակառակ էապես սահմանափակում է Կառավարման խորհրդի՝ պայմանագրով սահմանված լիազորությունները և «հաջողակ մասնակցի» պայմանագրային պարտականությունները,

գ) կարող է անարդարացի կերպով թուլացնել «սկզբունքորեն համապատասխանող» առաջարկներ ներկայացրած մրցույթի այլ մասնակիցների մրցունակությունը:

3.4 Մրցույթի հրավերի և նրա բովանդակության պարզաբանումը

3.4.1. Պոտենցիալ մասնակիցները, որոնք գնել են մրցույթային փաստաթղթերը կարող են ՄՀ-ի կամ ջրտնտպետկոմիտեի կողմից ներկայացված ինֆորմացիայի վերաբերյալ պարզաբանումներ պահանջել՝ հետևյալ կարգի համաձայն.

ա) Պարզաբանումներ պահանջող բոլոր դիմումները պետք է ջրտնտպետկոմիտեին ներկայացվեն գրավոր տեսքով և լինեն ստորագրված: Դիմումները կարող են ներկայացվել առձեռն կամ ֆաքսի միջոցով՝ սույն փաստաթղթի 3.9 կետում նշված հասցեով կամ ֆաքսի համարով:

բ) Պարզաբանումներ պահանջող բոլոր դիմումները պետք է ներկայացվեն մինչև սույն փաստաթղթի 3.11.1 կետում նշված վերջնաժամկետը:

3.4.2. Ջրտնտպետկոմիտեն «Հարցերի պատասխաններ» կոչվող մեկ փաստաթղթով գրավոր պարզաբանումներ կտա պոտենցիալ հայտ ներկայացնողների դիմումներին, որոնք ներկայացվել են սույն փաստաթղթի 3.4.1 կետի համաձայն: «Հարցերի պատասխաններում» կշարադրվեն պոտենցիալ մասնակիցների կողմից ՄՀ-ի 3.4.1 կետի համաձայն ստացված բոլոր հարցերը, սակայն չեն նշվի հարցերը ներկայացնող պոտենցիալ մասնակիցների անունները: Եթե տարբեր պոտենցիալ մասնակիցներ ներկայացնեն նմանատիպ կամ կրկնվող հարցեր, ընկերության կառավարման խորհուրդը դրանք կամփոփի որպես մեկ հարց, որին և կտա միայն մեկ պատասխան:

3.5 Այցելություններ տեղերում

3.5.1. Ջրտնտպետկոմիտեի «Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխման ծրագրի իրականացման գրասենյակը» (այսուհետ՝ ԾԻԳ) ժամանակացույց և որոշակի կարգ կսահմանի պոտենցիալ հայտ ներկայացնողների համար՝ տեղերում ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերի և դրանց հարակից տարածքների ֆիզիկական վիճակին ծանոթանալու նպատակով այցելություններ կատարելու համար (այսուհետ՝ այցելություններ տեղում): Չնայած նշված այցելություններին ներկա լինելը պարտադիր չէ, այնուամենայնիվ, հայտ ներկայացնողներին խորհուրդ է տրվում մասնակցել դրանց և տեղում ծանոթանալ բոլոր այն հանգամանքներին, որոնք կարող են հետագայում օգտակար լինել իրենց առաջարկները պատրաստելու համար:

3.5.2. Պոտենցիալ հայտ ներկայացնողը և իր աշխատողները, խորհրդատուները կամ գործակալները ջրտնտպետկոմիտեից և ընկերությունից թույլտվություն կստանան կառուցվածքներին ծանոթանալու նպատակով մուտք գործել համակարգի օբյեկտները և հողատարածքները: Սակայն նշված թույլտվությունը կտրվի միայն այն պայմանով, եթե պոտենցիալ հայտ ներկայացնողը և իր աշխատողները, խորհրդատուները կամ գործակալները ազատեն ՀՀ կառավարությանը և ջրտնտպետկոմիտեին (միասին՝ «իշխանություններ») և վերջիններիս աշխատակիցներին, խորհրդատուներին և գործակալներին ամեն տեսակի նյութական և այլ պատասխանատվությունից նշված այցելությունների արդյունքում տեղի ունեցած մարդկային զոհերի կամ մարմնական վնասվածքների, նյութական կորուստների կամ վնասների, ինչպես նաև ցանկացած այլ կորուստների, վնասների ու կրած ծախսերի համար՝ ստանձնելով դրանց հետ կապված ողջ պատասխանատվությունը:

3.5.3. ԾԻԳ-ը վարելու է հատուկ մատյան, որում գրանցելու է ՄՀ 3.5.1 կետում նշված այցելությունների և ՄՀ 3.7 կետում նշված կոնֆերանսի ժամանակ ներկա մասնակիցներին:

3.6 Տվյալների սենյակ

3.6.1. ԾԻԳ-ը պետք է բացի «տվյալների սենյակ», որտեղ պոտենցիալ հայտ ներկայացնողների և նրանց ներկայացուցիչների օգտագործման համար հավաքված կլինեն գործին առնչվող բոլոր տեղեկատվական նյութերը: «Տվյալների սենյակը» պետք է բաց լինի և գործի ՄՀ 3.11.1 կետում նշված օրվանից մինչև հայտեր ներկայացնելու համար սահմանված վերջին ժամկետը:

3.6.2. ԾԻԳ-ը պետք է ապահովի հայտ ներկայացնողների ազատ մուտքը «տվյալների սենյակ», ջրտնտպետկոմիտեի կողմից սահմանված ժամանակացույցի համաձայն:

3.7 Մասնակիցների կոնֆերանս

Ջրտնտպետկոմիտեն ՄՀ-ի 3.11.1 կետում սահմանված օրը Հայաստանի Երևան քաղաքում, ջրտնտպետկոմիտեի գրասենյակում կազմակերպելու է մասնակիցների կողմից հայտերը ներկայացնելուց առաջ անցկացվող կոնֆերանս (այսուհետ՝ մասնակիցների կոնֆերանս): «Մասնակիցների կոնֆերանսի» նպատակն է պոտենցիալ մասնակիցներին տեխնիկական պայմանները ներկայացնելը և ՄՀ բովանդակությունը համառոտ կերպով քննարկելը: Ջրտնտպետկոմիտեն պետք է կազմի և մասնակիցներին բաժանի այդ կոնֆերանսի արձանագրությունը, որը, սակայն, չի կարող հիմք հանդիսանալ ՄՀ-ում որևէ փոփոխություն կատարելու համար: Հայտ ներկայացնողների մասնակցությունը «մասնակիցների կոնֆերանսին» պարտադիր չէ: Եթե հայտ ներկայացնողը չի մասնակցում «մասնակիցների կոնֆերանսին», ապա այդ հանգամանքը հիմք չի հանդիսանում նրա ներկայացրած առաջարկ մերժելու համար, սակայն հաշվի է առնվում հայտերի գնահատման ժամանակ:

3.8 Մրցույթի հրավերում փոփոխություն կատարելը

3.8.1. Ջրտնտպետկոմիտեն կարող է համապատասխան լրացումներ հրապարակելու միջոցով փոփոխություններ կատարել ՄՀ-ում «ՄՋԸ գնումների ձեռնարկով» սահմանված ժամկետներում և կարգով: Ուրիշ ոչ մի եղանակով չի թույլատրվում փոփոխություններ կատարել ՄՀ-ում:

3.8.2. Նշված ձևով կատարված ցանկացած լրացում հանդիսանում է մրցութային փաստաթղթերի մաս, ՄՀ-ի կետ 3.2-ի համաձայն: Լրացումների մասին պետք է գրավոր կերպով ծանուցում ուղարկվի մրցույթի հրավեր ստացած բոլոր մասնակիցներին: Մրցույթի մասնակիցները պետք է յուրաքանչյուր լրացումն ստանալու մասին անհապաղ տեղեկացնեն ջրտնտպետկոմիտեին:

3.8.3. Ջրտնտպետկոմիտեն կարող է անհրաժեշտ չափով երկարաձգել հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը, համաձայն ՄՀ-ի կետ 3.11.2-ի, որպեսզի հայտ ներկայացնողները հնարավորություն ունենան ծանոթանալ կատարված լրացումներին և դրանք հաշվի առնել իրենց հայտերը պատրաստելու ժամանակ:

3.9 Ջրտնտպետկոմիտեի հետ կապը պարզաբանումներ ստանալու համար

Հայտերը ներկայացնելու գործընթացի ժամանակ համապատասխան ինֆորմացիա և պարզաբանումներ ստանալու համար մասնակիցները պետք է դիմեն միմիայն ԾԻԳ-ին: Հայտ ներկայացնողները ԾԻԳ-ի հետ կապը պետք է իրականացնեն ՄՀ 3.11.1 կետում նշված վերջնաժամկետի համաձայն՝ գրավոր հարցումներ ներկայացնելով հետևյալ հասցեով.

Ջրային տնտեսության պետական կոմիտե

Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ

պրն. Աղիբեկ Ղազարյանին
Վարդանանց փ., 13,
Երևան 375010, Հայաստան,
Հեռ. (374-1) 540-642, 540-472,
Ֆաքս. (374-1) 545-196
Էլ.-փոստ: aghazaryan@wsdp.am

3.10 Ջրտնտպետկոմիտեի կողմից տրամադրվող ինֆորմացիան

3.10.1. Յուրաքանչյուր հայտ ներկայացնող իր սեփական պատասխանատվությամբ է իրականացնում իր անկախ հետազոտությունները՝ ցուցաբերելով պատշաճ ջանասիրություն, ինչպես նաև կատարում այլ աշխատանքներ և հետազոտություններ ու օգտվում անկախ խորհրդատվական ծառայություններից՝ իր առաջարկը ձևակերպելու, պայմանագրի շուրջ բանակցություններ վարելու և հետագայում նաև Կառավարչի ֆունկցիաներն իրականացնելու համար:

3.10.2. Հայտերը ներկայացնելու և մրցույթի անցկացման ժամանակ, ինչպես նաև պայմանագրի տնողության ընթացքում ջրտնտպետկոմիտեն կամ իր խորհրդատուները, աշխատողները կամ գործակալները որևէ երաշխիք չեն տալիս և ոչ մի պատասխանատվություն չեն կրում մրցույթի հրավերում ներկայացված ինֆորմացիայի ամբողջականության կամ ճշտության համար: Ջրտնտպետկոմիտեն և նրա խորհրդատուները, աշխատողները կամ գործակալները չեն կարող որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից պատասխանատվության ենթարկվել այն վնասի համար, որ հասցվել է հայտերը ներկայացնելու և մրցույթի անցկացման ժամանակ, ինչպես նաև պայմանագրի տնողության ընթացքում տրամադրված ինֆորմացիայի օգտագործման արդյունքում:

3.10.3. Հայտ ներկայացնողները չպետք է հիմնվեն ջրտնտպետկոմիտեի կամ նրա խորհրդատուների, աշխատողների կամ գործակալների կողմից արված որևէ բանավոր հայտարարության վրա:

3.11 Ժամանակացույցը

3.11.1. Ջրտնտպետկոմիտեն ենթադրում է, որ մրցութային գործընթացը կտևի մոտավորապես 4 ամիս՝ ՄՀ-ի հրապարակման պահից մինչև գնահատման հանձնաժողովի կողմից մրցույթի հաղթող ճանաչված հայտ ներկայացնողին որոշելը (այսուհետ՝ «հաջողակ մասնակից»): Պայմանագիրը նախատեսվում է կնքել դրանից մոտավորապես 6 ամիս հետո:

Մրցութային գործընթացի համար նախատեսված ժամանակացույցը հետևյալն է.

Աշխատանքը	Վերջնաժամկետը
Հայտեր ներկայացնելու հրավեր	1 հոկտեմբերի, 2003 թ.
Տվյալների սենյակի բացում	10 հոկտեմբերի, 2003 թ.
Մասնակիցների կոնֆերանս	24 հոկտեմբերի, 2003 թ.
Այցելություններ տեղերում	27 հոկտեմբերի, 2003 թ.

Մասնակիցների կողմից պարզաբանումներ պահանջելու վերջին օրը	5 դեկտեմբերի, 2003 թ
«Պատասխաններ մասնակիցների հարցերին» փաստաթղթի առաքումը մասնակիցներին	15 դեկտեմբերի, 2003թ.
Հայտային երաշխիքի վերահաշվարկը միասնական արժույթի	15 դեկտեմբերի, 2003թ.
Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը և տեխնիկական առաջարկների բացումը	5 հունվարի, 2004 թ.
Տեխնիկական առաջարկների գնահատումը ՀՀ կառավարության կողմից	26 հունվարի, 2004 թ.
ՀԲ-ի հավանության ստացումը տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների վերաբերյալ	13 փետրվարի, 2004 թ.
Ֆինանսական առաջարկների բացումը և պայմանագրի շնորհման մասին առաջարկությունները	27 փետրվարի, 2004 թ.
ՀԲ-ի հավանությունը պայմանագրի շնորհման մասին	3 մարտի, 2004 թ.
Պայմանագրի շնորհումը	29 մարտի, 2003 թ.
Պայմանագրի ստորագրում	25 հունիսի, 2004 թ.
Վարկային պայմանագրի ուժի մեջ մտնելը	24 հունիսի, 2004 թ.
Պայմանագրի մեկնարկային օրը	1 հուլիսի, 2004 թ.

3.11.2. Ջրտնտպետկոմիտեն կարող է իր սեփական հայեցողությամբ և առանց հայտ ներկայացնողներին նախապես տեղյակ պահելու փոփոխություններ կատարել սույն փաստաթղթի 3.11.1 կետում ներկայացված ժամանակացույցի նախագծի մեջ: Հայտ ներկայացնողները ամեն դեպքում չպետք է հիմնվեն սույն փաստաթղթի 3.11.1 կետում ներկայացված ժամանակացույցի նախագծի վրա, իսկ ջրտնտպետկոմիտեն չպետք է որևէ պատասխանատվություն կրի ժամանակացույցում կատարված փոփոխությունների պատճառով առաջացած հետևանքների համար:

ՄԱՍ 4 - ԱՌԱՋԱՐԿԻ ՖՈՐՄԱՏԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Առաջարկի բովանդակությունը

Յուրաքանչյուր մասնակից պետք է ներկայացնի միայն մեկ հայտ, որը պետք է պարունակի.

ա) մեկ տեխնիկական առաջարկ, որը պետք է պարունակի հետևյալ գլուխները՝ նշված հերթականությամբ.

Գլուխ I - ՄՀ-ի 4.2 կետով պահանջվող ինֆորմացիան,

Գլուխ II - ՄՀ-ի 4.3 կետով պահանջվող հայտային երաշխիքը,

Գլուխ III - ՄՀ-ի 4.4 կետով պահանջվող՝ հայտ ներկայացնողի պարտավորագիրը,

Գլուխ IV - ՄՀ-ի 4.5 կետով պահանջվող՝ կոնսորցիումի հետ կապված փաստաթղթերը (համապատասխան դեպքերում),

Գլուխ V - ՄՀ-ի 5.1.3 կետով պահանջվող լիազորագիրը,

Գլուխ VI - Հրատարակված նյութերը (կամավոր),

Գլուխ VII- Տեղեկությունների ընկերության կամ կոնսորցիումի մասնակիցների մասին, և

բ) մեկ ֆինանսական առաջարկ, որը պետք է պարունակի.

1. հայտ ներկայացնողի գնացուցակը՝ լրացված համաձայն ՄՀ-ի 4.9.2 կետի,

2. ՄՀ-ի 4.9.6 կետով նախատեսված կոմիսիոն և խրախուսական վճարների մասին հայտարարագիրը:

4.2 Տեխնիկական առաջարկ – գլուխ I – Աշխատանքային պլան և տեղեկություններ աշխատակազմի մասին

4.2.1. Տեխնիկական առաջարկի առաջին գլուխը պետք է պարունակի հետևյալ կետերը՝ նշված հերթականությամբ:

ա) Մանրամասն աշխատանքային պլան (այսուհետ՝ աշխատանքային պլան), որով հայտ ներկայացնողը նկարագրում է պայմանագրի նախագծով սահմանված ծառայությունների (այսուհետ՝ ծառայություններ) իրականացման իր կողմից առաջարկվող կարգը, ինչպես նաև սահմանված կատարողական չափանիշներին բավարարելու իր ծրագրերը, համաձայն «Պայմանագրի ընդհանուր պայմանների» առդիր 9-ի (Կատարողական ցուցանիշների հիման վրա վճարվող խրախուսավճար): Աշխատանքային պլանը պետք է բաժանվի հետևյալ մասերի.

1. «Ընկերության կառավարում» վերնագրով մաս, որում նկարագրվում են հայտ ներկայացնողի այն աշխատանքային պլանները, որոնք վերաբերում են պայմանագրի ընդհանուր պայմանների առդիր 2-ին՝ «Ծառայությունների նկարագրություն»:

2. «Բարեփոխումներ և նորարարություններ» վերնագրով մաս, որում նկարագրվում են ՄՀ-ով սահմանված ժամկետներին և պայմաններին համապատասխանող այն բարեփոխումներն ու նորարարությունները, որոնք հայտ ներկայացնողն առաջարկում է իրականացնել ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերի կառավարման, շահագործման և վերանորոգման ոլորտներում:

բ) Մանրամասն կադրային պլան (այսուհետ՝ կադրային պլան), որում նկարագրվում է ծառայությունների իրականացման համար հայտ ներկայացնողի կողմից առաջարկվող իր սեփական աշխատակազմի կադրային կառուցվածքը (այսուհետ՝ «ղեկավար անձնակազմ»): Կադրային պլանը պետք է բաժանվի հետևյալ մասերի.

1. «Կադրային կառուցվածքի դիագրամ» վերնագրով մաս, որն իրենից ներկայացնում է առաջարկվող ղեկավար անձնակազմի հիմնական պաշտոնների ցուցակը պատկերող մի դիագրամ (յուրաքանչյուր պաշտոնը զբաղեցնող մասնագետի անունը, ֆունկցիաները, պաշտոնի տևողությունը, ինչպես նաև պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացնելու ժամանակ աշխատակազմի անդամի աշխատանքի վայրը),

2. «Կադրերի որակավորման մասին ամփոփ տեղեկանք» վերնագրով մաս, որտեղ աղյուսակի տեսքով ներկայացված են ղեկավար անձնակազմի առաջարկվող բոլոր անդամները, նրանց որակավորումը, աշխատանքային ստաժը և գործունեության ոլորտները:

3. «Ինքնակենսագրություններ» վերնագրով մաս, որը պարունակում է ՄՀ-ի հավելված Զ-ում ներկայացված ֆորմատի համաձայն կազմված և ստորագրված ղեկավար անձնակազմի հիմնական անդամների ինքնակենսագրությունները:

4.2.2. ՄՀ-ի 4.2 կետով սահմանված նպատակի համար, ղեկավար անձնակազմ նշանակում է «Ղեկավար անձնակազմի մասին» պայմանագրի ԸՊ-ի Առդիր 7-ով սահմանված փորձագիտական բազան ապահովող բոլոր անձինք: Ղեկավար անձնակազմի հիմնական անդամները, այն անձինք են, որոնք ռեզիդենտ կարգավիճակով բնակվում են Հայաստանում առնվազն մեկ տարի և կառավարման պայմանագրի առաջին տարվա ընթացքում ապահովում են փորձագիտական բազան: Ղեկավար անձնակազմի հիմնական անդամները պետք է ապահովեն ղեկավար անձնակազմի մարդ-ամիս աշխատանքային ծավալի առնվազ 80%-ը պայմանագրի առաջին երեք տարիների ընթացքում:

4.3 Տեխնիկական առաջարկ – գլուխ II – Հայտային երաշխիքը

4.3.1. Իր հայտի տեխնիկական առաջարկի երկրորդ գլխում յուրաքանչյուր հայտ ներկայացնող պետք է ներկայացնի հայտային երաշխիք՝ 50,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարի չափով կամ այլ կոնվերտացվող արժույթով (այսուհետ՝ «Հայտային երաշխիք»): «Հայտային երաշխիքն» այլ արժույթով տրամադրելու դեպքում, առաջարկվող գումարի համարժեքությունը պահանջվող գումարին պետք է հաշվարկվի ՄՀ 3.11.1 (է) կետում նշված օրը՝ «Ֆայնենշլ թայմզ» («Financial times») թերթում հրապարակված ԱՄՆ դոլարի և համապատասխան արժույթի օրվա միջինացված փոխարժեքի հիման վրա:

4.3.2. «Հայտային երաշխիքը» պետք է ներկայացվի «ընդունելի երկրում» գործող որևէ հեղինակավոր բանկի կողմից տրված երաշխիքի տեսքով: «Ընդունելի երկիր» արտահայտությունն այս գլխում վերաբերում է այն երկրներին, որոնք ճանաչված են որպես այդպիսիք ՀԲ-ի «Procurement under IBRD Loans and IDA Credits, January 1995 and as revised January and August 1996 and September 1998 and as amended» փաստաթղթում: Եթե մասնակիցը որպես «հայտային երաշխիք» ներկայացնում է բանկային երաշխավորագիր, ապա այն պետք է իր ֆորմատով համապատասխանի ՄՀ-ի հավելված Բ-ում ներառված «հայտային երաշխիքի» ֆորմատին: Հայտ ներկայացնողը պետք է ապահովի, որ իր ներկայացրած «հայտային երաշխիքը» դեռ 28 օր ուժի մեջ լինի հայտի վավերականության համար սահմանված ժամկետից հետո, իսկ ՄՀ 5.4.2 կետի համաձայն ջրտնտպետկոմիտեի կողմից այդ «հայտերի վավերականության ժամկետը» երկարացնելու դեպքում՝ 28 օր երկարացված ժամկետից հետո:

4.3.3. Համապատասխան հայտային երաշխիքով չապահովված ցանկացած հայտ կմերժվի ջրտնտպետկոմիտեի կողմից՝ որպես թերի: Կոնսորցիումի կողմից առաջարկվող «հայտային երաշխիքը» պետք է ներկայացվի այդ կոնսորցիումի բոլոր մասնակիցների կողմից:

4.3.4. Ջրտնտպետկոմիտեն պետք է «հայտերի վավերականության ժամկետն» ավարտվելուց հետո 28 օրվա ընթացքում վերադարձնի անհաջողակ մասնակիցների «հայտային երաշխիքները»:

4.3.5. Հաջողակ մասնակցի ներկայացրած «հայտային երաշխիքը» կվերադարձվի նրան, երբ վերջինս ՄՀ 7.3.2 կետի համաձայն ստորագրի պայմանագիրը և ՄՀ 7.4 կետի ու պայմանագրի համաձայն տրամադրի «կատարողական երաշխիքը»:

4.3.6. «Հայտային երաշխիքը» կարող է բռնագրավվել, եթե.

ա) հայտ ներկայացնողը հետ վերցնի իր կողմից ներկայացված առաջարկը, բացառությամբ ՄՀ-ի 5.6 կետով նախատեսված դեպքերի,

բ) հայտ ներկայացնողը չի համաձայնում փոփոխել իր ներկայացրած հայտի գինը, համաձայն ՄՀ-ի 6.6.3 կետի,

գ) «հաջողակ մասնակիցը» սահմանված ժամկետում.

1. չի ստորագրում պայմանագիրը, ըստ ՄՀ 7.3.2 կետի պահանջների, կամ

2. չի տրամադրում «կատարողական երաշխիքը», ըստ ՄՀ կետ 7.4-ի:

4.4 Տեխնիկական առաջարկ – գլուխ III – հայտ ներկայացնողի պարտավորագիրը

Իր տեխնիկական առաջարկի երրորդ գլխում յուրաքանչյուր մասնակից պետք է ներկայացնի «հայտ ներկայացնողի պարտավորությունները հաստատող նամակ» (այսուհետ՝ «պարտավորագիր»), որն իր ձևով և բովանդակությամբ պետք է համապատասխանի սույն ՄՀ-ի հավելված Դ-ում ներկայացված օրինակելի պարտավորագրին:

4.5 Տեխնիկական առաջարկ – գլուխ IV – Կոնսորցիումներին ներկայացվող պահանջները և նրանց մասնակցության հետ կապված փաստաթղթերը

4.5.1. Կոնսորցիումի բոլոր մասնակիցները պետք է միասնականորեն և անհատապես իրավական պարտավորություն ստանձնեն մրցույթի և պայմանագրի իրականացման ընթացքում, պայմանագրի պայմանների համաձայն: Այդ մասին վկայող հայտարարագիրը պետք է ընդգրկվի տեխնիկական առաջարկի 4-րդ գլխում:

4.5.2. Հայտ ներկայացնող յուրաքանչյուր կոնսորցիում իր տեխնիկական առաջարկի 4-րդ գլխում պետք է ընդգրկի գրավոր պարտավորություն՝ կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի լիազորված ներկայացուցչի կողմից պատշաճ կերպով կազմված և ստորագրված նամակի ձևով, որով.

ա) կոնսորցիումի մեջ մտնող յուրաքանչյուր սուբյեկտ հաստատում է իր մասնակցությունը կոնսորցիումում և ընդունում է այն պարտավորությունները, որոնք սահմանված են կոնսորցիումի հիմնադիր փաստաթղթերի մեջ՝ համաձայն սույն փաստաթղթի 4.5.1 կետի պահանջի,

բ) կոնսորցիումի մեջ մտնող յուրաքանչյուր սուբյեկտ հաստատում է իր պատրաստակամությունը միասնական և անհատական երաշխիքներ տալու ջրտնտպետկոմիտեին առ այն, որ կոնսորցիումը կապահովի պայմանագրում սահմանված իր պարտավորությունների կատարումը,

գ) սահմանվում է, թե կոնսորցիումի մեջ մտնող որ սուբյեկտը,

1. կստանձնի ղեկավարի դերը՝ հանդես գալով կոնսորցիումի մնացած մասնակիցների անունից,

2. լիազորություն կունենա պարտավորություն ստանձնելու կոնսորցիումի բոլոր մասնակիցների անունից:

4.5.3. Եթե մրցույթի հաղթողը և պայմանագիրը շահողը կոնսորցիում է, ապա վերջինս պետք է գրանցվի որպես մեկ առանձին իրավաբանական անձ, որը և կկնքի վերոհիշյալ պայմանագիրը ջրտնտպետկոմիտեի հետ: Առաջարկը ներկայացնելու պահին բավական է, որ համատեղ ձեռնարկության մեջ մտնող սուբյեկտներն իրենց մտադրությունը հայտնեն որպես մեկ իրավաբանական անձ գրանցվելու համար՝ ինչպես դա պահանջվում է սույն փաստաթղթի 4.5 հոդվածի համապատասխան դրույթներով: Հաջողակ մասնակիցը պետք է ապահովի, որ նշված իրավաբանական անձը գործող օրենսդրության համաձայն ունենա համապատասխան լիազորություններ պայմանագրով սահմանված պարտավորությունները կատարելու համար:

4.5.4. Եթե պայմանագիրը կնքվում է ջրտնտպետկոմիտեի և կոնսորցիումի միջև, ապա կոնսորցիումի մեջ մտնող սուբյեկտները պետք է «կատարողական երաշխիքներ» ներկայացնեն, որոնցով նրանք միասնաբար և առանձին-առանձին կերաշխավորեն կոնսորցիումի կողմից պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

4.5.5. Եթե մրցույթի հաղթողն իր առաջարկի 7-րդ մասում (սույն ՄՀ-ի հավելված Ե-ի ձևերը) տվյալներ է ներկայացրել մայր ընկերության (ընկերությունների) մասին, կառավարման խորհուրդը կարող է իր սեփական հայեցողությամբ պահանջել, որ մայր ընկերությունը (ընկերությունները) նույնպես ստորագրեն պայմանագիրը կամ, չստորագրելու դեպքում, տրամադրեն լրացուցիչ երաշխիք 6 ամսվա «կառավարման հաստատագրված վճարի» չափով:

4.6 Տեխնիկական առաջարկ – գլուխ V – Լիազորագիրը

Յուրաքանչյուր մասնակից, ՄՀ 5.1.3 կետի համաձայն, իր տեխնիկական առաջարկի հինգերորդ գլխում պետք է ներկայացնի գրավոր լիազորագիր:

4.7 Տեխնիկական առաջարկ – գլուխ VI – Լրացուցիչ գրականություն

Եթե մասնակիցը ցանկանում է ներկայացնել տպագիր նյութեր իր կամ կոնսորցիումի մեջ մտնող սուբյեկտներից որևէ մեկի մասին, նա պետք է այդ գրականությունն ընդգրկի միայն և միայն իր տեխնիկական առաջարկի VI գլխում:

4.8 Տեխնիկական առաջարկ - գլուխ VII - Ինֆորմացիա հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի մասնակիցների մասին

4.8.1. Տեխնիկական առաջարկի գլուխ VII-ը պետք է պարունակի հետևյալ հերթականությամբ ներկայացված հետևյալ մասերը.

ա) ընդհանուր տեղեկություններ հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ՝ համաձայն սույն ՄՀ-ին կից Ձև (1Ա)-ի, և ամփոփ տեղեկություններ կոնսորցիումի մասին՝ համաձայն Ձև (1Բ)-ի,

բ) հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի ընդհանուր և որոշակի կարողությունների և համապատասխան փորձի մասին տեղեկություններ, լրացնելով սույն ՄՀ-ին կից Ձև (2)-ը, (2Ա)-ն և (2Բ)-ն: Այս կարողությունները և փորձը մասնավորապես ներառում են հետևյալը.

(1) հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի գործնական կարողությունները և փորձը՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ տրամադրող ընկերության տեխնիկական, ադմինիստրատիվ, առևտրային, ֆինանսական կառավարման հարցում, որն իր չափերով և աշխատանքային ծավալով նույնը լինի, ինչ ընկերության կամ դրա մասնաճյուղերի չափերը և աշխատանքային ծավալը:

(2) հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի տեխնիկական կարողությունները և աշխատանքային փորձը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ոլորտում, ներառյալ հոսակորուստների նվազեցման ծրագրերը և ցանկացած այլ աշխատանքներ, որոնք կարող են նպաստել պայմանագրի կատարմանը,

(3) հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի կարողությունները և աշխատանքային փորձը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեխնիկական միջոցների և ենթակառուցվածքների ինժեներական, նախագծային և վերահսկողական աշխատանքների հարցում

(4) հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի կոնկրետ աշխատանքային փորձը Արևմտյան Եվրոպայում, նախկին Խորհրդային Միության երկրներում և Հայաստանում,

գ) հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի ֆինանսական հնարավորությունները՝ համաձայն տույն ՄՀ-ին կից Ձև (3)-ի, ինչպես նաև աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նշված է Ձև (3)-ում:

դ) կադրային կարողությունները և առաջարկվող հիմնական աշխատակազմը, համաձայն Ձև (4)-ի

ե) դատական որևէ գործում ներգրավված լինելու մասին տեղեկություններ, համաձայն Ձև (5)-ի:

4.9 Ֆինանսական առաջարկը

4.9.1. Յուրաքանչյուր մասնակցի հայտում ներկայացվող ֆինանսական առաջարկը պետք է բաղկացած լինի.

ա) սահմանված կարգով լրացված և պատշաճ ձևով կազմված գնացուցակից և

բ) կոմիսիոն և խրախուսական վճարների մասին հայտարարագրից:

4.9.2. Յուրաքանչյուր մասնակից պետք է ներկայացնի սահմանված կարգով լրացված և ստորագրված գնացուցակ: Հայտ ներկայացնողի գնացուցակի ձևը բերված է ՄՀ հավելված 9-ում: Հայտ ներկայացնողները պետք է ամբողջությամբ լրացնեն նշված ձևը՝ առանց դրանում որևէ փոփոխություն կատարելու:

4.9.3. Մասնակիցը կարող է իր գները ներկայացնել ՀԲ անդամ ցանկացած երկրի արժույթով արտահայտված: Եթե հայտ ներկայացնողը ցանկանում է, որ իրեն վճարեն մի քանի տարբեր արժույթներով, նա կարող է իր գնացուցակում գները ներկայացնել համապատասխան արժույթներով, սակայն՝ չի կարող օգտագործել ավելի քան 3 արժույթ:

4.9.4. Եթե մասնակիցը ցանկանում է իր գները ներկայացնել որևէ արժույթով, որը ընդգրկված չէ «Պայմանագրի ընդհանուր պայմանների» հոդված 6.5-ով սահմանված արտարժույթների ցանկում, ապա մասնակիցը պետք է տեղեկացնի այդ մասին ջրտնտպետկոմիտեին, և վերջինս, ՄՀ-ի կետ 3.8-ի համաձայն, լրացումներ կկատարի:

4.9.5. Մասնակիցների գնացուցակներում ներկայացված գնային առաջարկներում պետք է առանձին նշվեն ՀՀ հարկերը, տուրքերը, պարտադիր վճարները, մաքսատուրքերը, գանձումները և այլ տեսակի վճարները, համաձայն «Պայմանագրի ընդհանուր պայմանների» հոդված 1.9-ի:

4.9.6. Իր առաջարկի ֆինանսական մասում հայտ ներկայացնողը պետք է մանրամասն տեղեկություն տա տվյալ առաջարկի հետ կապված կամ պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացնելու համար իր կողմից գործակալներին վճարվող կամ վճարվելիք բոլոր կոմիսիոն և խրախուսական վճարների մասին (եթե այդպիսիք կան): Այդ վճարները պետք է ներառվեն հայտի գնի մեջ: Հայտ ներկայացնողը պետք է թվարկի իր բոլոր գործակալներին և նրանց հասցեները, ինչպես նաև գործակալներին վճարվող կամ վճարվելիք գումարների չափը՝ նշելով արժույթի տեսակը և կոմիսիոն կամ խրախուսական վճարների նպատակը: Եթե նման կոմիսիոն կամ խրախուսական վճարներ չեն կատարվել, հայտ ներկայացնողն այդ փաստի մասին նշում է իր ֆինանսական առաջարկում:

4.10 Առաջարկները և կառավարման պայմանագրի նախագիծը

4.10.1. Հայտ ներկայացնողները պետք է իրենց առաջարկները ձևակերպեն կառավարման պայմանագրի նախագծով սահմանված պայմանների հիման վրա և, առանց վերջինիներիս ամբողջականությունը խախտելու,

ա) առաջարկեն իրենց գները՝ ելնելով կառավարման պայմանագրի նախագծով սահմանված պայմաններից, ինչպես նաև

բ) իրենց առաջարկները ներկայացնեն՝ ելնելով այն ենթադրությունից, որ վերջնական պայմանագիրն ունենալու է նույն տեսքը, ինչ պայմանագրի նախագիծը:

4.10.2. Մասնակիցները չպետք է ներկայացնեն այնպիսի առաջարկներ, որոնք պարունակում են ՄՀ տարրերին հակասող դրույթներ:

4.10.3. Մասնակիցը չպետք է ներկայացնի այնպիսի առաջարկ, որը ենթադրում է այնպիսի հարաբերություններ ջրտնտպետկոմիտեի և հայտ ներկայացնողի միջև, որոնք տարբերվում են ՄՀ-ով սահմանված հարաբերություններից («այլընտրանքային առաջարկ»): Ջրտնտպետկոմիտեն նպատակ ունի կնքել կառավարման պայմանագիր, որը հիմնված է ՄՀ-ով սահմանված պայմանների և դրույթների վրա: Յուրաքանչյուր մասնակից, որը կփորձի ազդեցություն գործադրել մրցույթի գործընթացի վրա՝ նշված սկզբունքից այն շեղելու համար, կարող է ջրտնտպետկոմիտեի հայեցողությամբ զրկվել մրցույթում հետագա մասնակցություն ունենալու իրավունքից: Եթե մասնակիցը ներկայացնի «այլընտրանքային առաջարկ», այն հետ կվերադարձվի մասնակցին, իսկ վերջինս, ջրտնտպետկոմիտեի հայեցողությամբ, կարող է զրկվել մրցույթին հետագա մասնակցություն ունենալու իրավունքից:

4.10.4. Բոլոր մասնակիցները նախքան իրենց առաջարկները ներկայացնելը, պետք է ուսումնասիրեն կորպորատիվ գրանցման հետ կապված բոլոր իրավական պահանջները և մնացած բոլոր պայմանները որոնք կիրառվում են Հայաստանում բիզնեսով զբաղվել ցանկացող ընկերությունների նկատմամբ:

4.11 Հայտերը որպես պարտավորեցնող առաջարկներ

Մասնակիցների ներկայացրած հայտերը.

ա) հանդիսանում են պարտավորեցնող առաջարկներ, որոնք ցանկացած ժամանակ մինչև ՄՀ-ի 5.4.1 կետում սահմանված «հայտերի վավերակացության ժամկետի» վերջը կարող են ընդունվել ջրտնտպետկոմիտեի կողմից՝ վերջինիս սեփական հայեցողությամբ, համաձայն:

բ) պետք է շարունակեն հանդիսանալ պարտավորեցնող առաջարկներ, համաձայն ՄՀ 4.11(ա) կետի, անկախ ջրտնտպետկոմիտեի և ցանկացած հայտ ներկայացնողի միջև պայմանագիր կնքելու իրողությունից:

4.12 Հայտերը ներկայացնելու հետ կապված ծախսերը

4.12.1. Յուրաքանչյուր մասնակից պետք է կրի իր հայտը նախապատրաստելու և ներկայացնելու հետ կապված ծախսերը, ինչպես նաև այն բոլոր ծախսերը, որոնք կապված են.

ա) տեղերում այցելությունների և ուսումնասիրությունների կատարման,

բ) «տվյալների սենյակ» կատարվող այցելությունների և ինֆորմացիա հավաքելու գծով իրականացվող աշխատանքների,

գ) հարցազրույցների,

դ) ՇԻԳ-ի կողմից տրվող հարցերին պատասխանելու կամ պարզաբանումներ ներկայացնելու,

ե) ՇԻԳ-ի կողմից պարզաբանումներ ստանալու համար հարցեր նախապատրաստելու և ներկայացնելու, և

զ) պայմանագրի վերաբերյալ քննարկումների հետ:

4.12.2. Ջրտնտպետկոմիտեն որևէ պատասխանատվություն չի կրում և ոչ մի պարտավորություն չի ստանձնում մասնակցի կողմից հայտը պատրաստելու և ներկայացնելու հետ կապված ծախսերի ֆինանսավորման գծով՝ անկախ մրցույթի իրականացման ընթացքից և արդյունքներից:

4.13 Գաղտնիության պահպանումը

4.13.1. Մասնակիցների տեխնիկական առաջարկները բացելուց հետո Ջրտնտպետկոմիտեն և գնահատող հանձնաժողովը պարտավոր են այլ մասնակիցներից և մրցույթի իրականացման հետ առնչություն չունեցող անձանցից՝ մինչև պայմանագրի շնորհման մասին «հաջողակ մասնակցին» ծանուցելը, գաղտնի պահել ամեն տեսակի տեղեկատվություն՝ կապված.

ա) հայտերի ուսումնասիրման, պարզաբանման և գնահատման, և

բ) այս կամ այն մասնակցին պայմանագիրը շնորհելու վերաբերյալ արված առաջարկությունների հետ,

4.13.2. Մասնակիցները գիտակցում են, որ մրցույթը հանդիսանում է գաղտնի գործընթաց, և չնայած Իշխանությունները ամեն ջանք կգործադրեն մասնակիցների առաջարկները գաղտնի պահելու համար, նրանք որևէ պատասխանատվություն չեն կրելու ներկայացված հայտերում պարունակվող ինֆորմացիայի արտահոսքի դեպքում:

4.14 Ընդունելու կամ մերժելու իրավունքը

Ջրտնտպետկոմիտեն կարող է պայմանագրի շնորհման մասին որոշումը կայացնելուց առաջ ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ.

ա) ընդունել ցանկացած հայտ,

բ) մերժել ցանկացած հայտ,

գ) չեղյալ համար մրցույթը և մերժել բոլոր հայտերը,

դ) չեղյալ համար մրցույթը և գործընթացը նորից սկսել,

ե) անտեսել բացթողումները, սահմանված կարգից աննշան շեղումները կամ անհամապատասխանության որոշ էլեմենտներ, որոնց ազդեցությունը հայտի հիմնական բովանդակության վրա էական չէ:

Վերը նշված գործողությունների համար ջրտնտպետկոմիտեն որևէ պատասխանատվություն չի կրում և պարտավոր չէ հիմնավորել իր գործողությունները տուժած, ինչպես նաև մնացած մասնակիցների առջև:

ՄԱՍ 5 - ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ԸՆԴՈՒՆԵԼԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐԵԼԸ

5.1 Հայտի բնագիրը, պատճենները և դրանց ստորագրումը

5.1.1. Յուրաքանչյուր մասնակից պետք է նախապատրաստի և ներկայացնի իր առաջարկի ստորագրված բնօրինակը և դրա վեց պատճեն: Բնագրի և պատճենների միջև որևէ անհամապատասխանության առկայության դեպքում նախապատվությունը տրվելու է բնագրին:

5.1.2. Մասնակցի կողմից լիազորված անձը կամ անձինք պետք է վավերացնեն ներկայացված հայտը՝

ա) իր (իրենց) ստորագրությամբ կնքելով մասնակցի պարտավորագրի բնագիրը,

բ) իր (իրենց) ստորագրությամբ կնքելով առաջարկության ընդգրի բոլոր էջերը, բացառությամբ առանց փոփոխությունների ներկայացված գրականության տպագիր էջերի:

5.1.3. Հայտը ներկայացնելու գործընթացում մասնակցի անունից հանդես գալու համար լիազորված անձը կամ անձինքը պետք է ներկայացնի (ներկայացնեն) համապատասխան լիազորագիր, որը պետք է ընդգրկված լինի տեխնիկական առաջարկի հինգերորդ գլխում:

5.1.4. Ներկայացված առաջարկի տեքստում կատարված ամեն տեսակի լրացումներ, ջնջումներ և փոփոխություններ կարող են վավերական ճանաչվել միայն հայտը ներկայացնողի լիազորված անձի ստորագրությամբ հաստատվելու դեպքում:

5.2 Տեխնիկական և ֆինանսական առաջարկների զմռսումը և պիտակումը

5.2.1. Յուրաքանչյուր մասնակից պետք է.

ա) զմռսի իր տեխնիկական առաջարկի բնագիրը մի ծրարի մեջ, որի վրա պետք է փակցված լինի *«Տեխնիկական առաջարկ – բնագիր»* պիտակը («տեխնիկական առաջարկի ծրար»);

բ) զմռսի իր ֆինանսական առաջարկի բնագիրը մի ծրարի մեջ, որի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ որի վրա նշված են մասնակցի անունը և *«Ֆինանսական առաջարկ – բնագիր»* բառերը («ֆինանսական առաջարկի ծրար»);

գ) տեղավորի տեխնիկական առաջարկի և ֆինանսական առաջարկի զմռսած ծրարները մի երրորդ ծրարի կամ փաթեթի մեջ («արտաքին ծրար»), որը նույնպես պետք է զմռսված լինի և որի վրա պետք է փակցված լինի՝ *«ՀՀԿԸ սպառարկման տարածքներում ջրահեռացման և ջրամատակարարման ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքներով կառավարելու – առաջարկի բնագիր»*:

5.2.2. Յուրաքանչյուր մասնակից պետք է.

ա) զմռսի իր տեխնիկական առաջարկի յուրաքանչյուր պատճենը մի առանձին ծրարի մեջ, որի վրա պետք է փակցված լինի պիտակ մասնակցի անվամբ և *«Տեխնիկական առաջարկ – պատճեն»* պիտակը,

բ) զմռսի իր ֆինանսական առաջարկի յուրաքանչյուր պատճենը մի առանձին ծրարի մեջ, որի վրա պետք է փակցված լինի պիտակ մասնակցի անվամբ և *«Ֆինանսական առաջարկ – պատճեն»* բառերով,

գ) տեղավորի տեխնիկական առաջարկի և ֆինանսական առաջարկի պատճեններով մեկական զմռսած ծրար արտաքին ծրարների մեջ, որոնցից յուրաքանչյուրի վրա պետք է գրված լինի *«ՀՀՋԿԼ սպասարկման տարածքներում ջրահեռացման և ջրամատակարարման ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքներով կառավարելու – առաջարկի թիվ պատճեն»*: Արտաքին ծրարները պետք է համարակալվեն մեկից մինչև վեցը:

5.2.3. Մրցույթի հրավերի 5.2.1 և 5.2.2 կետերում նշված բոլոր ծրարները պետք է.

ա) հասցեագրվեն ջրտնտպետկոմիտեին, որի հասցեն ներկայացված է ՄՀ 5.3. կետում;

բ) իրենց վրա կրեն հետևյալ գրությունը.
«ՉԲԱՑԵԼ ՄԻՆՉԵՎ 2003թ. _____ ժամը 10:00», որտեղ պետք է նշվի հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը՝ օրը և ժամը:

5.2.4. Եթե արտաքին ծրարներից որևէ մեկը զմռսված և պիտակված չլինի ՄՀ 5.2 կետի պահանջների համաձայն, ապա ջրտնտպետկոմիտեն ոչ մի պատասխանատվություն չի կրի առաջարկը կորելու կամ ժամանակից շուտ բացվելու դեպքում: Եթե արտաքին ծրարներից որևէ մեկն իր վրա ունենա մասնակցի ինքնությունը բացահայտող տարր, ջրտնտպետկոմիտեն չի կարողանա այլևս երաշխավորել հայտ ներկայացնողի ինքնության գաղտնիությունը, սակայն այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ հայտը մերժելու համար:

5.3 Հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը

5.3.1. Հայտերը ջրտնտպետկոմիտեին պետք է ներկայացվեն ՄՀ 3.11.1 կետով սահմանված հայտերը ներկայացնելու օրվանից և ժամից ոչ ուշ, հետևյալ հասցեով՝

Ջրային տնտեսության պետական կոմիտե

Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ

պրն. Աղիբեկ Ղազարյանին
Վարդանանց փ., 13,
Երևան 375010, Հայաստան,
Հեռ. (374-1) 540-642, 540-472,
Ֆաքս. (374-1) 545-196
Էլ.-փոստ: aghazaryan@wsdp.am

5.3.2. Ջրտնտպետկոմիտեն կարող է իր սեփական հայեցողությամբ, իսկ անհաղթահարելի ուժի հանգամանքով չդիմնավորված լինելու դեպքում՝ առնվազն մեկ օրացուցային շաբաթ առաջ, փոփոխություններ կատարելով սույն ՄՀ-ում, երկարացնել հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը: Այդ դեպքում ջրտնտպետկոմիտեն և մասնակիցների համապատասխան բոլոր իրավունքներն ու պարտականությունները կտարածվեն մինչև երկարացված ժամկետի վերջը:

5.3.3. Մասնակիցները պետք է ապահովեն, որ իրենց առաջարկները ֆիզիկապես ներկայացվեն նշված հասցեով՝ առձեռն կամ գրիչի միջոցով: Մասնակիցները չեն կարող ուղարկել իրենց առաջարկները ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով: Իր առաջարկը ժամանակին ՄՀ 5.3.1 կետում նշված հասցեով ներկայացնելու համար պատասխանատու է միայն ինքը՝ հայտ ներկայացնողը, անկախ ամեն տեսակի տրանսպորտային և այլ պրոբլեմներից:

5.3.4. Հայտեր ներկայացնելու վերջին ժամկետից հետո ԾԻԳ-ի կողմից ստացված ցանկացած հայտ վերադարձվելու է այն ուղարկողին՝ առանց բացվելու:

5.4 Հայտերի վավերականության ժամկետը

5.4.1. Հայտերի վավերականությունը ուժի մեջ կմնա 150 օրվա ընթացքում՝ սկսած ՄՀ 3.11.1 կետով սահմանված հայտեր ներկայացնելու վերջին ժամկետի օրվանից, կամ կարող է երկարաձգվել ՄՀ 5.4.2 կետով սահմանված կարգի համաձայն:

5.4.2. Ջրտնտպետկոմիտեն կարող է համաձայնության գալ հայտ ներկայացնողների հետ՝ երկարացնել հայտերի վավերականության ժամկետը: Ջրտնտպետկոմիտեի համապատասխան դիմումը հայտ ներկայացնողներին և վերջինիներիս պատասխանները այս դիմումին պետք է հասցեատերերին ուղարկվեն գրավոր տեսքով՝ առձեռն կամ ֆաքսով: Հայտ ներկայացնողը կարող է մերժել հայտերի վավերականության ժամկետը երկարացնելու մասին ջրտնտպետկոմիտեի դիմումը՝ հնարավորություն ունենալով հետ վերցնելու իր «հայտային երաշխիքը»: Դիմումին համաձայնություն տված մասնակիցներին չի ներկայացվի իրենց առաջարկները փոխելու պահանջ կամ թույլտվություն. ներկայացված հայտում փոփոխություններ կարող են կատարվել միայն ՄՀ 5.5 կետով նախատեսված կարգով:

5.5 Առաջարկում փոփոխություն կատարելը

5.5.1. Մասնակիցը կարող է փոփոխություն կատարել իր կողմից ներկայացված առաջարկում, եթե համապատասխան փոփոխությունները ԾԻԳ-ին ներկայացվեն նախքան հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը:

5.5.2. Ներկայացված հայտում փոփոխություններ կատարելու կարգը հետևյալն է.

ա) մասնակիցը ներկայացնում է իր առաջարկության մեջ համապատասխան փոփոխություններ պարունակող փաստաթղթի բնօրինակը և վեց պատճեն,

բ) իր տեխնիկական առաջարկին վերաբերող ցանկացած փոփոխություններ պարունակող փաստաթղթի բնագիրը մասնակիցը զմռսում է մի ծրարի մեջ, որի վրա փակցնում է *«Տեխնիկական առաջարկ – փոփոխություններ – բնագիր»* պիտակը,

գ) իր տեխնիկական առաջարկին վերաբերող ցանկացած փոփոխություններ պարունակող փաստաթղթի յուրաքանչյուր պատճենը մասնակիցը զմռսում է մի առանձին ծրարի մեջ, որի վրա փակցնում է *«Տեխնիկական առաջարկ – փոփոխություններ – պատճեն թիվ__ _____»* պիտակը (ծրարները պետք է համարակալվեն, և համարները չպետք է կրկնվեն),

գ) հասցեագրվի ջրոնմտպետկոմիտեին, որի հասցեն ներկայացված է ՄՀ 5.3.1 կետում,

դ) գմոսված լինի մի ծրարի մեջ, որի վրա պետք է փակցված լինի *«ՀՋԿԸ սպասարկման տարածքներում ջրահեռացման և ջրամատակարարման ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքներով կառավարելու հայտ – հետ վերցնելու դիմում»* պիտակը:

5.6.3. Մասնակիցը կարող է հայտը հետ վերցնելու մասին իր դիմումը ուղարկել ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով, սակայն նա պարտադիր կերպով պետք է մինչև հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը ներկայացնի նաև իր դիմումի ստորագրված օրինակը:

5.6.4. Եթե հայտ ներկայացնողը հետ վերցնի իր կողմից ներկայացված առաջարկը մինչև «հայտի վավերականության ժամկետն» ավարտվելը, նրա տրամադրած «հայտային երաշխիքը» կարող է բռնագրավվել ՄՀ 4.3.6 կետի համաձայն:

դ) եթե փոփոխությունն արվում է ֆինանսական առաջարկում, ապա մասնակիցը ներկայացնում է իր գնացուցակի փոփոխված տարբերակը («փոփոխված գնացուցակ») և ՄՀ 4.9.5 կետով պահանջվող ցանկացած այլ տեղեկատվություն՝ զմռսելով այն մի ծրարի մեջ և վրան փակցնելով *«Ֆինանսական առաջարկ – փոփոխություններ – բնագիր»* պիտակը,

ե) փոփոխված գնացուցակի վեց պատճեններից յուրաքանչյուրը մասնակիցը զմռսում է առանձին ծրարի մեջ՝ փակցնելով դրա վրա *«Ֆինանսական առաջարկ – փոփոխություններ – պատճեն թիվ_»* պիտակը (ծրարները պետք համարակալվեն, և համարները չպետք է կրկնվեն);

զ) մասնակցից *«Ֆինանսական առաջարկ – փոփոխություններ – բնագիր»* պիտակով ծրար ստանալու դեպքում ԾԻԳ-ն այդ ծրարով փոխարինում է մասնակցի կողմից մինչ այդ ներկայացված ֆինանսական առաջարկը, որն առանց բացվելու վերադարձվում է մասնակցին;

ը) մասնակիցները տեղավորում են.

1. տեխնիկական մասի փոփոխությունների բնագիրը պարունակող զմռսած ծրարը և

2. փոփոխված գնացուցակի բնագիրը պարունակող զմռսած ծրարը մի արտաքին ծրարի մեջ, որի վրա փակցվում է «ՀՋԿԸ սպասարկման տարածքներում ջրահեռացման և ջրամատակարարման ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքներով կառավարելու հայտ – փոփոխություններ առաջարկի մեջ – բնագիր – Հայաստան»,

թ) տեխնիկական առաջարկի և ֆինանսական առաջարկի փոփոխությունների պատճենները ներկայացնելիս մասնակիցը պետք է հետևի նույն կարգին, որ նկարագրված է ՄՀ 5.5.2(է) կետում, և յուրաքանչյուր արտաքին ծրարի վրա պետք է փակցնի *«ՀՋԿԸ սպասարկման տարածքներում ջրահեռացման և ջրամատակարարման ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքներով կառավարելու հայտ – փոփոխություններ առաջարկի մեջ – պատճեն թիվ_»* պիտակը (ծրարները պետք է համարակալվեն, և համարները չպետք է կրկնվեն):

5.5.3. Մասնակիցները չեն կարող փոփոխություններ կատարել իրենց առաջարկներում հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը լրանալուց հետո:

5.6 Առաջարկները հետ վերցնելը

5.6.1. Մասնակիցը կարող է հետ վերցնել իր առաջարկը հայտը ներկայացնելուց հետո, եթե նա մինչև հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը իր հայտը հետ վերցնելու մասին դիմում («հայտը հետ վերցնելու մասին դիմում») ներկայացնի ջրտնտպետկոմիտեին: Հայտեր ներկայացնելու վերջին ժամկետից հետո հայտը հետ վերցնելու մասին դիմումի ստացման դեպքում կգործի ՄՀ 5.6.4 կետում սահմանված կարգը:

5.6.2. Հայտը հետ վերցնելու մասին մասնակցի դիմումը պետք է.

ա) լինի գրավոր,

բ) ներկայացվի առձեռն,

ՄԱՍ 6 - ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

6.1 Հայտերի բացումը

6.1.1. Գնահատող հանձնաժողովը բացելու է հայտերի «Արտաքին ծրարները» և «Տեխնիկական առաջարկների» ծրարները, ինչպես նաև ՄՀ-ի կետ 5.5 և 5.6 կետերով սահմանված կարգով փոփոխված և հետ վերցված առաջարկների ծրարները, բացմանը ներկա լինելու ցանկություն հայտնած մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ ՄՀ-ով սահմանված ժամին, օրը և վայրում: Հայտերի բացման ժամանակ ոչ մի հայտ չի մերժվելու, բացառությամբ ուշ ներկայացված հայտերի, ինչպես սահմանված է ՄՀ-ի կետ 5.3.4-ում:

6.1.2. Հայտերի բացման ժամանակ չբացված և չհրապարակված հայտերը գնահատման ենթատակով այլևս չեն քննարկվելու, անկախ որևէ հանգամանքից:

6.1.3. Հայտերի բացմանը ներկա գտնվող մասնակիցների ներկայացուցիչները պետք է գրանցվեն և ստորագրությամբ հաստատեն իրենց ներկայությունը: .

6.1.4. Գնահատող հանձնաժողովը պետք է կազմի հայտերի բացման նիստի արձանագրությունը, որում պետք է ներառվեն նաև հրապարակված այն տեղեկությունները, որոնք նշված են ՄՀ կետ 6.2.2-ում:

6.1.5. Նախքան տեխնիկական առաջարկների գնահատման ավարտը գնահատող հանձնաժողովը չի բացելու ֆինանսական առաջարկները, որոնք զմռսած տեսքով ի պահ են տրվելու որևէ անկախ մարմնի:

6.1.6. Ֆինանսական առաջարկներ պարունակող ծրարները, ՄՀ-ի կետ 6.3-ով սահմանված կարգի, հրապարակայնորեն բացվելու են ներկա գտնվելու ցանկություն հայտնած այն մասնակիցների ներկայությամբ, որոնք ներկայացրել են պահանջներին համապատասխանող հայտ, որը՝ տեխնիկական ցուցանիշների համար ստանալով 75 կամ ավելի միավոր, բավարարում է նվազագույն տեխնիկական պահանջները:

6.2 Տեխնիկական առաջարկների բացումը

6.2.1. Գնահատող հանձնաժողովը բացելու է տեխնիկական առաջարկներով ծրարները, համաձայնք ՄՀ-ի 6.1.1 կետի, ինչպես նաև փոփոխված և հետ վերցված առաջարկները: «Հետ վերցված» նշումը կրող ծրարները բացվելու են առաջինը, և հայտարարվելու է առաջարկը ներկայացնողի անունը: Այն հայտերը, որոնց համար ՄՀ 5.6 կետով սահմանված կարգով ներկայացվել է հայտը հետ վերցնելու ընդունելի դիմում, չեն բացվելու: Այնուհետև, բացվելու են «Փոփոխություններ» նշումը կրող ծրարները, և ամենայն մանրամասնությամբ հայտարարվելու է դրանցում ներկայացված ինֆորմացիան:

6.2.2. Գնահատող հանձնաժողովը առաջարկների բացման ժամանակ հայտարարելու է մասնակիցների անունները, հետ վերցված և փոփոխված առաջարկները, հայտային երաշխիքի առկայությունը (կամ բացակայությունը) ու չափը, և նմանատիպ այլ տեղեկություններ, որոնք նպատակահարմար կգտնի հայտարարել:

6.3 Ֆինանսական առաջարկների բացումը

6.3.1. Գնահատող հանձնաժողովը, 6.1.6 կետի համաձայն, կրացի միայն այն մասնակիցների ներկայացրած ֆինանսական առաջարկներով ծրարները, որոնք իրենց ներկայացրած հայտի տեխնիկական ցուցանիշների համար ստանալով 75 կամ ավելի միավոր, բավարարում են նվազագույն տեխնիկական պահանջները և ներկայացրել են ընդունելի «հայտային երաշխիք»:

6.3.2. Գնահատող հանձնաժողովը կորոշի ֆինանսական առաջարկներով ծրարները բացելու օրը և ժամը, ու մրցույթին հետագա մասնակցության իրավունք ստացած մասնակիցներին կտեղեկացնի ֆինանսական առաջարկներով ծրարները բացելու օրվա, ժամի և վայրի մասին:

6.3.3. Բացման նիստին ներկա գտնվելու ցանկություն հայտնած մասնակիցների ներկայությամբ գնահատող հանձնաժողովը կրացի մրցույթում հետագա մասնակցություն ունենալու իրավունք ստացած հայտ ներկայացնողների ֆինանսական առաջարկներով ծրարները, կհայտարարի նրանց անունները, առաջարկած գները և թույլատրված սխալների ուղղումները, եթե այդպիսիք կան:

6.3.4. Ֆինանսական առաջարկներով ծրարների բացմանը ներկա գտնվող մասնակիցների ներկայացուցիչները պետք է գրանցվեն և ստորագրությամբ հաստատեն իրենց ներկայությունը:

6.3.5. Գնահատող հանձնաժողովը պետք է կազմի ֆինանսական առաջարկների բացման նիստի արձանագրություն, ներառելով ՄՀ 6.3.3 կետի համաձայն հրապարակված տեղեկությունները:

6.3.6. Գնահատող հանձնաժողովը հետ կվերադարձնի ֆինանսական առաջարկներով չբացված ծրարներն այն մասնակիցներին, որոնք մրցույթում հետագա մասնակցության իրավունք չեն ստացել կամ չեն ներկայացրել ընդունելի հայտային երաշխիք:

6.4 Առաջարկների գնահատումը

Գնահատող հանձնաժողովը գնահատելու է մինչև հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը ստացված տեխնիկական և ֆինանսական առաջարկները ՄՀ 6.5-ից 6.8 կետերում սահմանված կարգի համաձայն:

6.5 Տեխնիկական առաջարկների գնահատումը

6.5.1. Տեխնիկական առաջարկների մանրամասն գնահատումը սկսելուց առաջ գնահատող հանձնաժողովը որոշելու է, թե արդյոք ներկայացված յուրաքանչյուր առաջարկը.

ա) ստորագրված է սահմանված կարգի համաձայն,

բ) ներկայացված է համապատասխան երաշխիքի հետ միասին,

գ) էապես համապատասխանում է ՄՀ-ի կետ 3.3-ով սահմանված տեխնիկական չափանիշներին,

դ) պարունակում է որևէ պարզաբանում կամ հիմնավորում, որը ջրտնտպետկոմիտեին կարող է անհրաժեշտ լինել առաջարկի համապատասխանությունը որոշելու համար, ՄՀ-ի կետ 6.5.2-ի համաձայն:

6.5.2. Եթե տեխնիկական առաջարկը էապես չի համապատասխանում սահմանված պահանջներին, ապա ջրտնտպետկոմիտեն տեղեկացնելու է տվյալ առաջարկը ներկայացրած մասնակցին այն մասին, որ նրա տեխնիկական առաջարկը մերժվել է:

6.5.3. Գնահատող հանձնաժողովը կգնահատի ՄՀ տարրերի պահանջներին էապես համապատասխանող տեխնիկական առաջարկները՝ հետևյալ չափանիշների և գնահատման համակարգի հիման վրա:

		Մաքսիմալ միավորը	Պահանջվող մինիմալ միավորը
1.	Հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի հնարավորությունները, կարողությունները և աշխատանքային փորձը		
	(Ա) Ընկերության կամ կոնսորցիումի մասնակիցների աշխատանքային փորձը նմանատիպ աշխատանքներ իրականացնելու հարցում	6	
	(Բ) Հայտատու ընկերության կամ կոնսորցիումի աշխատանքային փորձը՝ նախկին Խորհրդային Միության երկրներում և Հայաստանում կոմունալ ծառայությունների ոլորտում համանման ընույթի և բարդության աշխատանքներ իրականացնելու հարցում	4	
	(Գ) Տեղերում այցելություններին և մասնակիցների կոնֆերանսին հայտ ներկայացնողի մասնակցությունը	4	
	(Դ) Հայկական գործընկերների ներգրավվածությունը և համապատասխան փորձը հայտատու ընկերությունում կամ կոնսորցիումում	6	
	Հնարավորությունների, կարողությունների և աշխատանքային փորձի ընդհանուր միավորները	20	14
2.	Մեթոդոլոգիայի և աշխատանքային պլանի որակը		
	(Ա) Աշխատանքային պլանի հստակությունը, համապարփակությունը և մանրամասնությանն աստիճանը: Առաջարկված մեթոդաբանության և մոտեցումների նպատակահարմարությունը: Հայաստանի ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերի և այդ ոլորտում ծառայություններ մատուցելու մասին իրազեկության աստիճանը:	15	
	(Բ) «Պայմանագրի ընդհանուր պայմաններին» կից ծառայությունների նկարագրության	8	

	մասին առդիր 2-ով սահմանված ծառայությունների ընդգրկվածության աստիճանը աշխատանքային պլանում:		
	(Գ) Հայտ ներկայացնողի կողմից կատարողական ցուցանիշներն իրականացնելու պատրաստակամության աստիճանը:	7	
	Մեթոդոլոգիայի և աշխատանքային պլանի որակի ընդհանուր միավորները	30	22
3.	Կադրային պլանի որակը		
	(Ա) Կադրային պլանի ընդհանուր որակը	10	
	(Բ) Առաջարկվող կադրերի որակավորումը և մասնագիտական փորձը	40	
	Կադրային պլանի որակի ընդհանուր միավորները	50	42

6.5.4. Մրցույթի հրավերի 6.5.3 (3) (Ա) կետով սահմանված նպատակով «Կադրային պլանի ընդհանուր որակի» գնահատումը կատարվում է հետևյալ գործոնների հիման վրա.

(ա)	կադրային պլանի հստակությունը, համապարփակությունը և մանրամասնության աստիճանը,	4
(բ)	որքանով է կադրային պլանում ընդգրկված փորձագիտական պոտենցիալը համապատասխանում «Պայմանագրի ընդհանուր պայմաններին» կից «Ղեկավար անձնակազմի մասին» առդիր 7-ին	3
(գ)	«Պայմանագրի ընդհանուր պայմաններին» կից «Ծառայությունների մասին» առդիր 2-ով սահմանված ծառայությունների ընդգրկվածության աստիճանը կադրային պլանում:	3

6.5.5. Սրցույթի հրավերի 6.5.3(3)(Բ) կետով սահմանված նպատակով «Առաջարկվող կադրերի որակի» ընդհանուր գնահատումը կատարվելու է հետևյալ կերպ.

1. «Առաջարկվող կադրերի որակավորման և մասնագիտական փորձի» գնահատումը կատարվում է հիմնվելով այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են մասնագիտական որակավորումը, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում աշխատանքային փորձը, մնանատիպ այլ հանձնարարություններ իրականացնելու փորձը, կառավարչի մոտ աշխատելու ստաժը, զարգացած երկրներում աշխատելու փորձը, տարածաշրջանում աշխատելու փորձը, հայերեն և անգլերեն լեզուների իմացությունը: Նշված չափանիշները կիրառվելու են աշխատակազմի հետևյալ անդամների նկատմամբ.

		Մաքսիմալ միավորը	Պահանջվող մինիմալ միավորը
(Ա)	Ծրագրի ռեզիդենտ ղեկավար	18	(14)
(Բ)	Օտարերկրյա մասնագետներից կազմված ղեկավար անձնակազմի անդամներ, որոնք պետք է լինեն ռեզիդենտ կամ երկար ժամանակով ՀՀ գործուղված (12 ամսից ավելի ամբողջ պայմանագրի համար)	8	
(Գ)	Մասնավոր սեկտորի տեղացի մասնագետներից կազմված ղեկավար անձնակազմի անդամներ	8	
(Դ)	Ռեզիդենտ ղեկավար անձնակազմին օժանդակող կադրեր (կարճ ժամանակով գործուղված մասնագետներ և կենտրոնական գրասենյակի անդամներ)	6	

2. Աշխատակազմի առանձին անդամների մասնագիտական որակավորման և աշխատանքային փորձի գնահատումը կատարվում է հետևյալ տոկոսաչափերի հիման վրա.

		Առավելագույն տոկոսաչափը	
		Օտարերկրացի	*Հայ*
(Ա)	Ընդհանուր որակավորումը	20%	20%
(Բ)	Համապատասխանությունը ծրագրի պահանջներին	40%	40%
(Գ)	Տարբեր երկրներում ունեցած փորձը	20%	
(Դ)	Տարածաշրջանում ունեցած փորձը և լեզուների իմացությունը	20%	40%
	Ընդհանուր տոկոսաչափը	100%	100%

6.5.6. Տեխնիկական առաջարկի համար տրվող առավելագույն միավորը 100-ն է: Մրցույթում հետագա մասնակցության իրավունք ստանալու համար մասնակցի ներկայացրած տեխնիկական առաջարկը պետք է ստանա առնվազն.

1. 75 միավոր,
2. փակագծերում նշված այն նվազագույն միավորները, որոնք անհրաժեշտ է հավաքել մրցույթին հետագա մասնակցության իրավունք ունենալու համար:

6.5.7. Այն առաջարկությունները, որոնց տեխնիկական մասերը 75 միավորից քիչ են ստանում կամ գոնե չեն հավաքում հետագա մասնակցության համար անհրաժեշտ մինիմալ միավորները, դուրս են մնում մրցույթից, և գնահատող հանձնաժողովը այլևս չի բացում նրանց ֆինանսական առաջարկները: Հայտ ներկայացնողներն ընդունում են, որ գնահատման այս գործընթացի պայմաններում հավանական է, որ մասնակիցը հավաքի յուրաքանչյուր չափանիշի համար սահմանված նվազագույն միավորները, սակայն չկարողանա հավաքել հետագա մասնակցության համար պահանջվող 75 միավորը:

6.6 Ֆինանսական առաջարկների գնահատումը

6.6.1. Տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքում հավաքած միավորները հայտարարելուց հետո գնահատող հանձնաժողովը կբացի այն ֆինանսական առաջարկները, որոնց տեխնիկական մասերը ստացել են առնվազն 75 միավոր և ապահովել մինիմալ միավորների ստացումը յուրաքանչյուր չափանիշի գծով՝ համաձայն ՄՀ 6.3 գլխի:

6.6.2. Ֆինանսական առաջարկների գնահատման հիմքում լինելու է մասնակցի կողմից առաջարկվող հաստատագրված վճարի ընդհանուր չափը. որքան այն ցածր լինի, այնքան ավելի բարձր միավորներ կստանա մասնակցի ֆինանսական առաջարկը: Եթե ներկայացված առաջարկի և առաջարկի պատճեններից մեկի միջև տարբերություններ լինեն, որպես հիմք ընդունվելու է առաջարկի բնագիրը: Այն մասնակիցը, որը կառաջարկի կառավարման հաստատագրված վճարի ամենացածր, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից հիմնավոր ճանաչված արժեքը, իր ֆինանսական առաջարկության համար կստանա 100 միավոր: Սենացած մասնակիցների ֆինանսական առաջարկությունները կգնահատվեն հետևյալ կերպ.

$$100 \times \frac{\text{ամենացածր հաստատագրված վճար}}{\text{առաջարկվող հաստատագրված վճար}}$$

6.6.3. Ֆինանսական առաջարկության մեջ մաթեմատիկական սխալ հայտնաբերելու դեպքում գնահատող հանձնաժողովն ուղղում է այն հետևյալ սկզբունքների հիման վրա.

(ա) բառերով գրված գումարները գերակայություն ունեն թվերով գրված գումարների նկատմամբ,

(բ) միավոր արժեքների և դրանց գումարային արժեքների միջև տարբերության դեպքում որպես հիմք ընդունվում է միավորի արժեքը, եթե գնահատող հանձնաժողովը չի որոշում, որ միավորի արժեքը գրելիս կատարվել է ակնհայտ անուշադրության սխալ,

(գ) Ֆինանսական առաջարկում ներկայացված գումարը մրցույթի հրավերի 6.6.3 կետի համաձայն գնահատման հանձնաժողովի կողմից և մասնակցի համաձայնությամբ ճշտվելուց հետո համարվում է հայտի պարտավորեցնող բաղադրիչ, և եթե մասնակիցը հետագայում հրաժարվում է կատարված ուղղումները ճանաչելուց, նրա հայտը մերժվում է, իսկ հայտային երաշխիքը՝ բռնագրավվում է մրցույթի հրավերի 4.3.6 կետի համաձայն:

6.7 Վերահաշվարկը միասնական արժույթի

Մասնակիցների ֆինանսական առաջարկների համեմատումը և գնահատումը հեշտացնելու համար Գնահատող հանձնաժողովը ՄՀ 3.11.1 կետում նշված օրը կվերահաշվարկի տարբեր արժույթներով արտահայտված կառավարման ծառայությունների համար առաջարկվող հաստատագրված վճարները՝ արտահայտելով դրանք ԱՄՆ դոլարով՝ «Ֆայնենշլ թայմզ» («Financial Times») թերթում հրապարակված ԱՄՆ դոլարի և համապատասխան արժույթի այդ օրվա միջինացված փոխարժեքի հիման վրա:

6.8 Առաջարկների ընդհանուր գնահատումը

Տեխնիկական և ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքում ստացված միավորների հիման վրա գնահատող հանձնաժողովը հաշվարկելու է յուրաքանչյուր մասնակցի՝ ՄՀ-ի պահանջներին էապես համապատասխանող որակված տեխնիկական և ֆինանսական առաջարկների ընդհանուր միավորը հետևյալ կերպ.

Գնահատման ընդհանուր միավոր = 0.70 × [տեխնիկական միավոր] + 0.30 × [ֆինանսական միավոր]

Գնահատման առավելագույն ընդհանուր միավորը ստացած հայտ ներկայացնողը կլինի հաջողակ մասնակիցը:

6.9 Հետաքննություն կատարելու և պարզաբանումներ պահանջելու ջրտնտպետկոմիտեի իրավունքը

6.9.1. Ջրտնտպետկոմիտեն կարող է մրցույթի իրականացման ընթացքում իր սեփական հայեցողությամբ որոշում ընդունել մասնակիցների ներկայացրած առաջարկների վերաբերյալ պարզաբանումներ պահանջելու մասին: Նշված որոշումով չպետք է նպատակ հետապնդվի, առաջարկվի կամ թույլատրվի փոփոխություններ կատարել տեխնիկական առաջարկի բովանդակության կամ ֆինանսական առաջարկի գնի մեջ:

6.9.2. Ջրտնտպետկոմիտեն, ՄՀ 6.9.1 կետի համաձայն, պարզաբանումներ տալու մասին իր հարցումները պետք է կատարի գրավոր և այդ հարցումների պատասխանները մասնակիցներից պահանջի նույնպես գրավոր տեսքով:

6.9.3. Առանց ՄՀ 6.9.1 կետի ամբողջականությունը խախտելու, ջրտնտպետկոմիտեն կարող է.

ա) հետաքննել փաստեր առանձին մասնակիցների, այդ թվում՝ կոնսորցիումի մեջ մտնող սուբյեկտների, առաջարկվող ենթակապակառուցների և մասնակցի ու նրա ներկայացրած հայտի հետ առնչվող այլ սուբյեկտների իրական կարողությունների և աշխատանքային փորձի մասին;

բ) դիմել որևէ երրորդ կողմի, որպեսզի վերջինս հաստատի մասնակցի կողմից ներկայացված ինֆորմացիայի հավաստիությունը:

6.10 Կապը իշխանությունների հետ

6.10.1. Մասնակիցները չպետք է ներկայացված առաջարկության հետ կապված որևէ հարցով դիմեն ջրտնտպետկոմիտեին կամ գնահատող հանձնաժողովին առաջարկությունները բացելու պահից մինչև պայմանագրի շնորհման պահը:

6.10.2. Եթե մասնակիցներից որևէ մեկը առաջարկությունների գնահատման, համեմատման կամ պայմանագրի շնորհման մասին որոշում կայացնելու ընթացքում ջրտնտպետկոմիտեի կամ գնահատող հանձնաժողովի, նրանց ծառայողների, խորհրդատուների կամ գործակալների վրա որևէ ազդեցություն գործադրելու փորձ կատարի, ապա ջրտնտպետկոմիտեն կարող է իր սեփական հայեցողությամբ մերժել այդ մասնակցի հայտը:

6.11 Կաշառակերության և մեքենայությունների երևույթների առնչությամբ

6.11.1. ՄԶԳ-ն, IBRD-ն և Համաշխարհային բանկը պահանջում են, որ նշված կառույցների կողմից ֆինանսավորվող պայմանագրերի շրջանակներում վարկը ստացողը (այսուհետ՝ վարկառուն), ինչպես նաև հայտ ներկայացնողները մրցույթի իրականացման և պայմանագրի կնքման ընթացքում խստագույնս պահպանեն ՄԶԳ-ի, IBRD -ի և Համաշխարհային բանկի կողմից սահմանված էթիկայի ստանդարտները: Նման քաղաքականություն հետապնդելով՝ ՄԶԳ-ն, IBRD-ն և Համաշխարհային բանկը.

ա) տալիս է հետևյալ հասկացությունների սահմանումները ՄՀ առնչությամբ.

1. «կաշառակերության երևույթների» առկայությունը ենթադրում է, որ մրցույթի իրականացման և պայմանագրի կնքման ընթացքում պետական պաշտոնյաների գործողությունների վրա ազդեցություն գործելու նպատակով առաջարկվել, տրվել կամ անուղղակիորեն կորզվել են նյութական արժեքներ,

2. «մեքենայության երևույթները» վերաբերում են մրցույթի իրականացման կամ պայմանագրի կնքման գործընթացի վրա ի վնաս վարկառուի ազդեցություն գործելու նպատակով տվյալների խեղաթյուրմանը, ինչպես նաև իրականից ցածր գներ սահմանելու և վարկառուին ազատ մրցակցության բարիքներից օգտվելու հնարավորությունից զրկելու նպատակով մասնակիցների միջև նախնական գաղտնի պայմանավորվածությանը,

բ) կմերժի առաջարկությունը, եթե պարզի, որ այդ հայտը ներկայացնողը կաշառակերության և մեքենայության երևույթներ պարունակող գործարքների մեջ է մտել պայմանագիրը շահելու նպատակով,

գ) որոշակի կամ անորոշ ժամկետով կազմակերպությանը կզրկի ՄՋԸ-ի, IBRD -ի կամ ՀԲ կողմից ֆինանսավորվող ծրագրերում մասնակցություն ունենալու իրավունքից, եթե պարզի, որ կազմակերպությունը կաշառակերության և մեքենայության երևույթներ պարունակող գործարքների մեջ է մտել ՄՋԸ-ի, IBRD -ի կամ ՀԲ կողմից ֆինանսավորվող պայմանագրի համար պայքարելու կամ այն իրականացնելու ընթացքում,

դ) իրեն իրավունք կվերապահի պահանջել, որ ՄՋԸ-ի, IBRD -ի կամ ՀԲ կողմից ֆինանսավորվող պայմանագրերում ընդգրկվի այնպիսի դրույթ, որով հայտատուից պահանջվի ՄՋԸ-ին, IBRD-ին կամ ՀԲ-ին հնարավորություն տալ ստուգել պայմանագրի կատարմանը վերաբերող հաշվապահական և ֆինանսական գրառումները և դրանք առդիտի ենթարկել ՄՋԸ-ի, IBRD -ի կամ ՀԲ կողմից նշանակված աուդիտորների կողմից:

6.11.2. Մասնակցի հայտը քննարկման չի ընդունվի, եթե նա կաշառակերության կամ մեքենայությունների երևույթներ պարունակող գործարքների մեջ մտնելու համար ՄՋԸ-ի, IBRD-ի կամ ՀԲ կողմից ճանաչվել և հայտարարվել է որպես մրցույթին մասնակցելու իրավունքից զրկված:

6.11.3. Մասնակիցները պետք է ծանոթ լինեն ՄՋԸ-ի, EBRD-ի կամ ՀԲ կողմից ֆինանսավորվող պայմանագրերում պարունակվող այն դրույթներին, որոնք վերաբերում են կաշառակերությանը կամ մեքենայություններին:

6.12 Շահերի բախում

6.12.1. Մասնակիցը, նրա թիմի որևէ անդամը, ինչպես նաև նրա աշխատողները և խորհրդատուները չպետք է ուղղակի կամ անուղղակի կերպով որևէ հետաքրքրվածություն ունենան որևէ այլ մասնակցի կողմից ներկայացված հայտի մեջ: Մասնակիցները չպետք է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետից առաջ կամ հետո որևէ համաձայնություն կամ պայմանավորվածություն ձեռք բերեն, որը նրանց հնարավորություն տա շահադիտական նկատառումներ ունենալ որևէ այլ մասնակցի հայտի նկատմամբ: Առանց վերը նշված դրույթների ամբողջականությունը խախտելու, մասնակիցներն իրավունք չունեն որպես «ղեկավար անձնակազմ» անդամ առաջարկել որևէ անձի, որը ներկայացված է նաև մեկ այլ մասնակցի հայտում: Այնուամենայնիվ, այս դրույթը չի տարածվում այն մասնավոր տեղական խորհրդատուների վրա, որոնց հանձնարարության ժամկետը չի գերազանցում 12 ամիսը ամբողջ պայմանագրի համար:

6.12.2. Որևէ կազմակերպություն կամ դրա դուստր ձեռնարկություն, որը ջրամատակարարման խորհրդատվական ծառայություններ է տրամադրել.

ա) պայմանագրային փաստաթղթերի նախապատրաստման,

բ) պայմանագրի պատրաստման կամ մշակման աշխատանքների, կամ

գ) մրցութային գործընթացի կազմակերպման հարցում,

իրավունք չի ունենալու հետագայում ապրանքներ, ծառայություններ կամ աշխատանքներ տրամադրել ոչ մասնակիցներին՝ մրցույթի ընթացքում, ոչ էլ կառավարչին՝ պայմանագրի իրականացման ընթացքում:

ՄԱՍ 7 - ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

7.1 Հաջողակ մասնակիցը

7.1.1. ՄՀ գլուխ 6-ի համաձայն, մրցույթի հաղթող կճանաչվի այն մասնակիցը («հաջողակ մասնակից»), որը իր ներկայացրած տեխնիկական և ֆինանսական առաջարկների համար ստացել է ամենաբարձր ընդհանուր միավորը և որի հայտը լիովին համապատասխանել է ներկայացված պահանջներին:

7.1.2. «Հաջողակ մասնակցի» հետ պայմանագիրը կնքվում է այն դեպքում, եթե տվյալ մասնակիցը համապատասխանում է ՄՀ կետ 4.8-ով սահմանված որակավորման չափանիշներին, և ջրտնտպետկոմիտեն հաստատում է մասնակցի՝ այդ չափանիշներին համապատասխան լինելու հանգամանքը:

7.1.3. Ջրտնտպետկոմիտեն պետք է որոշի, որ հայտերը ներկայացնելուց հետո որևէ շոշափելի փոփոխություններ չեն կատարվել, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ հաջողակ մասնակցի՝ պայմանագիրն իրականացնելու կարողությունների վրա:

7.2 Կառավարման պայմանագրի շնորհումը

7.2.1. Մինչև «հայտերի վավերականության ժամկետն» ավարտվելը, Կառավարման խորհուրդը կամփոփի բոլոր ներկայացված հայտերի գնահատումը և կստանա ՀԲ-ի հավանությունը դրա արդյունքների վերաբերյալ: ՀԲ-ի հավանությունն ստանալուց հետո ԾԻԳ-ը գրավոր կտեղեկացնի «հաջողակ մասնակցին» այն մասին, որ վերջինիս առաջարկությունն ընդունվել է Կառավարման խորհրդի կողմից («պայմանագրի շնորհման մասին ծանուցում»):

7.2.2. Երբ «հաջողակ մասնակիցը» ՄՀ կետ 7.4-ի պահանջների համաձայն ներկայացնի կատարողական երաշխիքը, ջրտնտպետկոմիտեն անմիջապես հաղթող ճանաչված մասնակցի մասին տեղեկացնելու է մնացած մասնակիցներին և վերադարձնելու է նրանց հայտային երաշխիքները, ՄՀ կետ 4.3-ի համաձայն:

7.3 Կառավարման պայմանագրի ստորագրումը

7.3.1. «Պայմանագրի շնորհման մասին ծանուցման» հետ միասին ջրտնտպետկոմիտեն «հաջողակ մասնակցին» ուղարկում է նաև պայմանագիրը:

7.3.2. ՄՀ կետ 7.3.1-ով սահմանված կարգով պայմանագիրն ստանալուց հետո 28 օրվա ընթացքում «հաջողակ մասնակիցը» պետք է ստորագրի պայմանագիրը և իր ստորագրությամբ կնքի պայմանագրի յուրաքանչյուր էջ, որից հետո վերադարձնի այն ջրտնտպետկոմիտեին, իսկ վերջինս այն պետք է ներկայացնի Կառավարման խորհրդին՝ ստորագրության և ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վավերացման համար:

7.3.3. Կառավարման պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու օրվանից, եթե որևէ առարկություններ չեն ներկայացվում ՀԲ-ի կողմից:

7.4 Կատարողական երաշխիք

«Պայմանագրի շնորհման մասին ծանուցումն» ստանալուց հետո 60 օրվա ընթացքում «հաջողակ մասնակիցը» պետք է «կատարողական երաշխիք» ներկայացնի ԾԻԳ-ին՝ պայմանագրի նախագծում սահմանված գումարի, ձևի և բովանդակության համաձայն:

7.5 Պայմանագիրը չստորագրելու և կատարողական երաշխիք չտրամադրելու հետևանքները

Եթե «հաջողակ մասնակիցը» չկատարի ՄՀ 7.3 և 7.4 կետերով սահմանված պահանջները, դա կդիտվի որպես պայմանագրի խզում, որի արդյունքում ջրտնտպետկոմիտեն չեղյալ կհամարի պայմանագրի շնորհման մասին իր որոշումը, կբռնագրավի մասնակցի «հայտային երաշխիքը» և իրեն իրավունք կվերապահի կնիքառել ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով նախատեսված այլ պատժամիջոցներ: Դրանից հետո ջրտնտպետկոմիտեն կարող է իր սեփական հայեցողությամբ պայմանագիրը շնորհել մեկ այլ մասնակցի:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՀԱՅՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎԸ

ՀԱՅՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎ (ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ)

Հաշվի առնելով, որ .....(*մասնակցի անվանումը և համատեղ ձեռնարկությանն մնացած մասնակիցների անվանումները*)(այսուհետև՝ մասնակիցը) ս.թ. (*ամսաթիվը*)-ին հայտ է ներկայացրել ՀՋԿԸ սպասարկման տարածքներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների պայմանագրային հիմունքներով կառավարումն իրականացնելու համար (այսուհետև՝ առաջարկ).

Սույնով հայտնում ենք քաղաք շահագրգիռ անձանց, որ .....-ի (երկրի անունը) ..... (բանկի անունը), որը գրանցված է ..... (այսուհետև՝ բանկը) պարտավորվում է և պարտավորեցնում է իր իրավահաջորդներին վճարելու .....-ին (այսուհետև՝ .....) ..... գումարը:

[Մասնակիցը պետք է երաշխիքի գումարը գրի բառերով և թվերով: Այդ գումարը պետք է համապատասխանի ՄՀ 4.3 գլխում նշված գումարին: «Հայտային երաշխիք» հետ կապված մանրամասները ներկայացված են սույն գլխում:]

Այս պարտավորության ՊԱՅՄԱՆՆԵՐԸ հետևյալն են.

(1) եթե մասնակիցը իր հայտը հետ վերցնի մինչև հայտերի վավերականության ժամկետի վերջը,

(2) եթե մասնակիցը հրաժարվի կատարել իր հայտում այն ուղղումները, որոնք առաջարկվում են մրցույթի հանձնաժողովի կողմից ՄՀ-ի 6.6.3 կետի համաձայն,

(3) եթե «հաջողակ մասնակիցը».

(ա) հրաժարվի կնքել պայմանագիրը,

(բ) հրաժարվի տրամադրել «կատարողական երաշխիքը»,

մենք պարտավորվում ենք վճարել .....-ին վերը նշված գումարը .....-ի կողմից առաջին իսկ գրավոր դիմումը ստանալուց հետո՝ հաշվի առնելով, որ .....-ն պարտավոր չէ հիմնավորել իր պահանջը, այլ միայն նշելու է իր դիմումում, որ նշված գումարի պահանջը պայմանավորված է այս կամ այն հանգամանք(ներ)ով:

Երաշխիքն ուժի մեջ կլինի տրվելու պահից մինչև հայտի վավերականության ժամկետի ավարտը և դեռ 28 օր դրանից հետո: Հաշվի առնելով, որ նշված ժամանակաշրջանը կարող է մրցութային փաստաթղթերի համաձայն երկարացվել .....-ի կողմից՝ նշում ենք, որ սույն փաստաթուղթը երաշխիք չի տալիս երկարացված ժամանակաշրջանի համար: Այս երաշխիքի հետ կապված ցանկացած պահանջ պետք է ներկայացվի բանկին մինչև վերը նշված օրը:

Կնքված է բանկի կնիքով

«.....» ....., ...

ՎԿԱ	ԲԱՆԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(ստորագրություն, անուն և հասցե)	ԿՆԻՔ

ՀԱՎԵԼՎԱԾ Գ

ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ԳՆԱՑՈՒՅԱԿԻ ՁԵՎԸ

ՄԱՄՆԱԿՑԻ ԳՆԱՅՈՒԹԱԿԻՆ ՁԵՎԸ

Հետևյալ գներն առաջարկվում են ..... *[մասնակցի անվանումը]*ի պատասխան Հայաստանի Հանրապետության Ջրային տնտեսության պետական կոմիտեի՝ հայտ ներկայացնելու առաջարկությանը: Առաջարկվող գները հիմնված են ՄՀ-ով սահմանված պահանջների և պայմանների վրա, վերաբերում են միայն «կառավարման հաստատագրված վճարին»՝ համաձայն ՄՀ 2.3.1 և ԸՊ 6.2.2 հոդվածների, և ներառում են գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը և տուրքերը, համաձայն «Պայմանագրի ընդհանուր պայմանների» հոդված 1.9-ի:

Կառավարման ծառայությունների համար առաջարկվող հաստատագրված վճար պայմանագրի ամբողջ տևողության (ներառյալ 5-րդ և 6-րդ տարիների) համար.

	արժույթի անունը	գումարը	որից ՀՀ հարկերը և տուրքերը
արժույթ թիվ 1			
արժույթ թիվ 2			
արժույթ թիվ 3			
արժույթ թիվ 4			

Մենք ընդունում ենք, որ կառավարման հաստատագրված վճարը պայմանագրի ընթացքում տրվելու է հետևյալ համամասնություններով.

- 1-ին տարի՝ ամբողջ գումարի 23 տոկոսը,
- 2-րդ տարի՝ ամբողջ գումարի 21 տոկոսը,
- 3-րդ տարի՝ ամբողջ գումարի 18 տոկոսը,
- 4-րդ տարի՝ ամբողջ գումարի 14 տոկոսը,
- 5-րդ տարի՝ ամբողջ գումարի 12 տոկոսը (պայմանական),
- 6-րդ տարի՝ ամբողջ գումարի 12 տոկոսը (պայմանական):

Սույն հայտի առնչությամբ մեր կողմից կատարված կամ կատարվելիք կոմիսիոն վճարները (եթե այդպիսիք կան) հետևյալն են.

Գործակալի անունը և հասցեն	գումարը և արժույթը	կոմիսիոն վճարի նպատակը

Ծանոթություն.

1. Հայտ ներկայացնողներից չի պահանջվում նշված արժույթներով արտահայտված գումարները վերահաշվել ամ. դոլարով:
2. Առյուսակում գրված բոլոր արժույթներով արտահայտված գումարները չպետք է ներկայացվեն մեկ հարյուրերորդականից ավելի մեծ ճշտությամբ:

Մասնակցի անունը

Մասնակցի կողմից լիազորված անձի (անձանց)

անուն(ներ)ը և ստորագրություն(ներ)ը

ՀԱՎԵԼՎԱԾ Դ

ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐԸ

Ջրային տնտեսության պետական կոմիտեի
Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակ
պրն. Աշիբեկ Ղազարյանին
Վարդանաց փ., 13,
Երևան 375010, Հայաստան,
Հեռ. (374-1) 540-642, 540-472,
Ֆաքս. (374-1) 545-196
Էլ.-փոստ: aghazaryan@wsdp.am

ՀՋԿԸ սպասարկման տարածքներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքներով կառավարելու պայմանագրի առնչությամբ

«ՀՋԿԸ սպասարկման տարածքներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցումը պայմանագրային հիմունքներով կառավարելու համար հայտ ներկայացնելու առաջարկ» կապակցությամբ խնդրում ենք ընդունել ի գիտություն հետևյալը.

(i) մենք ծանոթացել ենք մրցույթի հրավերին և հաստատում ենք, որ ստացել ենք մրցութային փաստաթղթերի բոլոր էջերը;

(ii) մենք ստացել և ուսումնասիրել ենք ՄՀ-ին արված բոլոր լրացումները՝ հետևյալ ցանկով.

[թվարկեք ստացված առդիր-լրացումները]

(iii) մեր հայտը ներկայացնելով, որը բաղկացած է տեխնիկական և ֆինանսական առաջարկներից, մենք պարտավորություն ենք ստանձնում իրականացնելու ՄՀ-ով սահմանված բոլոր ծառայությունները և պարտականությունները՝ համաձայն ՄՀ-ով սահմանված ժամկետների ու պայմանների, ինչպես նաև ՄՀ-ով նախատեսված և մեր ֆինանսական առաջարկում նշված փոխհատուցումն ստանալու պայմանով,

(iv) մեր առաջարկը հիմնված է ՄՀ-ով սահմանված ժամկետների և պայմանների վրա, իսկ եթե մեր առաջարկության որևէ դրույթ հակասում է ՄՀ-ի պայմաններին, մենք սույնով հրաժարվում ենք այդ դրույթից,

(v) մեր ֆինանսական առաջարկում ներկայացված գինը («Մասնակցի գնացուցակի ձևը») հիմնված է ՄՀ-ով սահմանված պայմանների վրա և ներառում է գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը, տուրքերը, պարտադիր վճարները, մաքսատուրքերը, գանձումները և այլ տեսակի վճարները համաձայն «Պայմանագրի ընդհանուր պայմանների» հոդված 1.9-ի,

(vi) մեր առաջարկը ներկայացնելով, մենք պարտավորություն ենք ստանձնում կազմավորել մեր առաջարկի կադրային պլանով նախատեսված աշխատակազմը կամ, Ընկերության նախնական գրավոր համաձայնությամբ, ձևավորել դրան համարժեք կամ ավելի լավ աշխատակազմ՝ ՄՀ-ով սահմանված ծառայություններն իրականացնելու համար,

(vii) մենք մեր համաձայնությունն ենք տալիս առ այն, որ մեր առաջարկն ուժի մեջ մնա մինչև ՄՀ-ով սահմանված հայտերի վավերականության ժամկետի վերջը:

(viii) սույնով ջրտնտպետկոմիտեին և նրա լիազոր ներկայացուցիչներին իրավունք է տրվում անցկացնել ցանկացած հարցում կամ հետաքննություն՝ հայտի առնչությամբ ներկայացված հայտարարագրերի, փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիությունը ստուգելու համար, ինչպես նաև պարզաբանումներ ստանալ մեր բանկիրներից և պատվիրատուներից ֆինանսական և տեխնիկական ցանկացած հարցերի վերաբերյալ,

(ix) ջրտնտպետկոմիտեն և նրա լիազոր ներկայացուցիչները կարող են հետագա տեղեկություններ ստանալու համար դիմել հետևյալ անձանց.

Ընդհանուր և կառավարման հետ կապված հարցերի համար	
Կոնտակտային անձ 1	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ
Կոնտակտային անձ 2	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ

Աշխատակազմին վերաբերող հարցերի համար	
Կոնտակտային անձ 1	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ
Կոնտակտային անձ 2	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ

Տեխնիկական հարցերի համար	
Կոնտակտային անձ 1	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ
Կոնտակտային անձ 2	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ

Ֆինանսական հարցերի համար	
Կոնտակտային անձ 1	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ
Կոնտակտային անձ 2	Հասցեն և հաղորդակցման այլ տվյալներ

(x) Սույն առաջարկը ներկայացվում է, գիտակցելով, որ.

ա) հայտատուների կողմից ներկայացված առաջարկներում պարունակվող ինֆորմացիան ենթակա է վերստուգման մրցույթային գործընթացի ժամանակ,

բ) ջրտնտպետկոմիտեին իրավունք է վերապահվում.

– փոփոխել այս ծրագրի շրջանակներում ցանկացած պայմանագրի բովանդակությունը և արժեքը, որի դեպքում մրցույթին մասնակցելու իրավեր կստանան միայն այն մասնակիցները, որոնք բավարարում են սույն ՄՀ-ի պահանջները,

– մերժել կամ ընդունել ցանկացած հայտ և մերժել բոլոր հայտերը,

գ) ջրտնտպետկոմիտեն պատասխանատվություն չի կրում վերոհիշյալ x(բ) կետում նշված գործողությունների հետևանքների համար,

(xi) Ներքոստորագրյալները հայտարարում են, որ պատշաճ կերպով կազմված և լրացված հայտում ներկայացված հայտարարագրերի և ինֆորմացիայի բոլոր մանրամասները ամբողջական են, ճշմարիտ և ճշգրիտ:

Ստորագրությունը Անունը .....-ի անունից [նշել մասնակցի կամ կոնսորցիումի մեջ մտնող պատասխանատու սուբյեկտի անունը]	Ստորագրությունը Անունը .....-ի անունից [նշել սուբյեկտի անունը]

Ստորագրությունը Անունը .....-ի անունից [նշել սուբյեկտի անունը]	Ստորագրությունը Անունը .....-ի անունից [նշել սուբյեկտի անունը]

Ստորագրությունը Անունը .....-ի անունից [նշել սուբյեկտի անունը]	Ստորագրությունը Անունը .....-ի անունից [նշել սուբյեկտի անունը]

«.....» .....,

.....

ՄՀ 5.1.3 կետի համաձայն լիազորված անձի (անձանց) ստորագրություն(ներ)ը

ՀԱՎԵԼՎԱԾ Ե

ՁԵՎԵՐ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Լրացուցիչ ինֆորմացիա, որը կարող է ներկայացվել մասնակցի կողմից անհրաժեշտության դեպքում)

Ծանոթություն. Հետևյալ ձևերը լրացվում են կառավարչի կոնսորցիումի անդամներից յուրաքանչյուրի համար: Եթե տվյալ ընկերության ներքին կանոնադրության պահանջներից ելնելով ներկայացված տեղեկատվությունը վերաբերում է նաև մայր ընկերությանը, տեղեկատվական ձևում պետք է կատարվի համապատասխան նշում, հակառակ դեպքում դա կարող է դիտվել որպես խաբեություն, ինչպես նախատեսված է Բանկի «Խորհրդատուների ընտրության կարգի մասին» ձեռնարկով:

Ձև (ԼԱ)

[լրացվում է հայտ ներկայացնող կոնսորցիումի
մեջ մտնող բոլոր սուբյեկտների կողմից]

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բոլոր առանձին ընկերություններին և կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցին խնդրվում է լրացնել այս ձևը

Եթե մասնակիցը ցանկանում է նշել պայմանագրի խիստ մասնագիտական բաղադրիչների իրականացման համար ներգրավված ենթակապալառուներին, ապա ստորև ներկայացվող ինֆորմացիան պետք է լրացվի նաև ենթակապալառուի (ենթակապալառուների) համար՝ Ձևեր 2-ի, 3-ի, 4-ի, 4Ա-ի և 5-ի հետ միասին:

1.	Ընկերության անվանումը	
2.	Գլխավոր գրասենյակի հասցեն	
3.	Հեռախոս	Կոնտակտային անձ
4.	Ֆաքս	Տելեքս
5.	Գրանցման վայրը	Գրանցման տարին

Սեփականատերերի ազգությունը1		
Անունը		Ազգությունը
1.		
2.		
3.		
4.		
5.		

ԱՄՆ դոլարի համարժեքով	Տարի 1	Տարի 2	Տարի 3	Տարի 4	Տարի 5
Տարեկան շրջանառությունը					

ՁԼ (1Բ)

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Համատեղ ձեռնարկության մեջ մտնող մասնակիցների անունները
1. Պատասխանատու մասնակիցը
2. Մասնակից
3. Մասնակից
4. և այլն

Տարեկան շրջանառության ընդհանուր արժեքը ԱՄՆ դոլարի համարժեքով, հաշվարկված՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող փոխանակման կուրսով:

Տարեկան շրջանառությունը (ԱՄՆ դոլարի համարժեքով)						
Մասնակից	Ձև 2 էջ #	Տարի 1	Տարի 2	Տարի 3	Տարի 4	Տարի 5
1. Պատասխանատու մասնակ.						
2. Մասնակից						
3. Մասնակից						
4. և այլն						
Ընդամենը						

Ձև (2)

Մանրամասներ նմանատիպ բնույթի և բարդության պայմանագրերի մասին

Հայտ ներկայացնողի կամ կոնսորցիումի մասնակցի անունը.

Պայմանագրերի անվանումները

1. Ջրային ընկերության կառավարում (առնվազն երեք համանման բարդության նմանակ)

1.1. .....
1.2. .....
1.3. .....

2. Շինարարական, նախագծային և վերահսկողական աշխատանքներ (առնվազն երեք համանման բարդության նմանակ)

2.1. .....
2.2. .....
2.3. .....

3. Ջրային ընկերության կառավարում անցումային տնտեսություն ունեցող երկրներում

3.1. .....
3.2. .....

Յուրաքանչյուր պայմանագրի համար օգտագործեք առանձին թերթ:

ՁԼ (2Ա)

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ջրային ընկերության կառավարում

Ծրագրի համար պատասխանատու ընկերության անվանումը.	
Ծրագրի նկարագրությունը.	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը Պայմանագրի տևողությունը *(կոնկրետ՝ ամիս կամ տարի)*
Պայմանագրով նախատեսված դերը (նշել վանդակներից մեկը) ☐ Գլխավոր կապալառու ☐ Կառավարիչ ☐ Համատեղ ձեռնարկության մասնակից ☐ Ենթակապալառու	Պայմանագրի ընդհանուր արժեքը. Ծախսը մասնակցի համար.
Ծառայությունների ծավալը *(օրինակ)* • Սպասարկման գոտին (քառ. կմ.) • Բաժանորդների թիվը • Բնակչության թիվը • Ընկերության աշխատակազմի անդամների թիվը • Շահագործվող համակարգերի թիվը • Արտադրության ծավալը (խ.մ./տարի) • Վարձերի հաշվարկման համակարգը (ջրաչափերի տեսակները, ցուցմունքները վերցնելու հաճախականությունը, և այլն) և այլն	
Ծրագրի նկարագրությունը. *(հիմնական խնդիրները, ներգրավված միջոցները և կառուցողական արդյունքները, մասնավորապես չհաշվավող ջրի, էներգաէներգիայի խնայողության, վարձերի հաշվարկման և գանձման հարցում, ինչպես նաև պայմանագրի կատարումն ավարտելը՝ պայմանագրի արժեքից ավելի քիչ կամ շատ գումարի սահմաններում (եթե շատ՝ հիմնավորեք), և այլն)*	
Պատվիրատու. *(Անուն, հասցեն, կոնտակտային տվյալները)*	
Մեկնաբանություններ.	

Ձև (2Բ)

ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Շինարարական, նախագծային և վերահսկողական աշխատանքներ

Ծրագրի համար պատասխանատու ընկերության անվանումը.	
Ծրագրի նկարագրությունը.	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը Պայմանագրի տևողությունը *(կոնկրետ՝ ամիս կամ տարի)*
Պայմանագրով նախատեսված դերը (նշել վանդակներից մեկը) ☐ Գլխավոր կապալառու ☐ Կառավարիչ ☐ Համատեղ ձեռնարկության մասնակից ☐ Ենթակապալառու	Պայմանագրի ընդհանուր արժեքը. Ծախսը մասնակցի համար.
Ծրագրի նկարագրությունը. *Աշխատանքների բնույթը և առանձնահատկությունները, որոնք նման են ներկա պայմանագրին, ինչի համար մասնակիցը հայտ է ներկայացրել, ծրագրի իրականացման կազմակերպումը, ապրանքների և աշխատանքների ձեռքբերումը և այլն.*	Պայմանագրի ընդհանուր արժեքը.
Պայմանագրի նկարագրությունը. *(հիմնական հարցերը, պայմանագրով նախատեսված պահանջները, այդ թվում՝ հիմնական աշխատանքների ամսական/տարեկան ծավալները, ներգրավված միջոցները, պայմանագրի կատարումն ավարտելը՝ պայմանագրի արժեքից ավելի քիչ կամ շատ զումարի սահմանները/մեծությունը (եթե շատ՝ հիմնավորեք), և այլն)*	
Պատվիրատուն. *(Անունը, հասցեն, կոնտակտային տվյալները)*	
Մեկնաբանություններ.	

ՁԼ (3)

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայտ ներկայացնողի կամ կոնսորցիումի մասնակցի անունը.

Մասնակիցները, այդ թվում՝ կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակից, պետք է ներկայացնեն ֆինանսական ինֆորմացիա: Յուրաքանչյուր մասնակից կամ կոնսորցիումի մեջ մտնող սուբյեկտ պետք է լրացնի սույն ձևը: Անհրաժեշտության դեպքում կարելի է օգտագործել առանձին թերթեր՝ բանկիրի մասին համապատասխան տեղեկություններ տրամադրելու համար.

Բանկիր	Բանկիրի անվանումը	
	Բանկիրի հասցեն	
	Հեռախոս	Կոնտակտային անձի անունը և պաշտոնը
	Ֆաքս	Տելեքս

Ամփոփ կերպով ներկայացրեք փաստացի ակտիվները և պասիվները ԱՄՆ դոլարի համարժեքով (հաշվարկված յուրաքանչյուր տարվա վերջին սահմանված փոխանակման կուրսով) նախորդ հինգ օրացուցային տարիների համար: Փաստացի պարտավորությունների հիման վրա, ամփոփ կերպով ներկայացրեք հաջորդ երկու տարիների համար ակտիվների և պասիվների կանխատեսումները ԱՄՆ դոլարի համարժեքով: Նման տեղեկատվության տրամադրման անհնարինության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հիմնավորում:

Ֆինանսական ինֆորմացիա ԱՄՆ դոլարի համարժեքով	Փաստացի նախորդ հինգ տարիների համար				
	5.	4.	3.	2.	1.
1. ընդամենը ակտիվներ					
2. ընթացիկ ակտիվներ					
3. ընդամենը պասիվներ					
4. ընթացիկ պասիվներ					
5. շահույթը նախքան հարկում					
6. շահույթը հարկվելուց հետո					
7. զուտ արժեքը (1) - (3)					
8. ընթացիկ հարաբերություն (2)/(4)					
9. բաժնետիրական կապիտալի աճ % (5)/(7 նախորդ տարվա)					

Կից ներկայացրեք առուղիտ անցած տարեկան ֆինանսական վերջին հաշվետվությունները, այդ թվում՝ շահույթի և վնասի վերաբերյալ հաշվետվությունները, հաշվեկշիռը և բացատրություններ (առանձին մասնակցի կամ կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի համար):

Եթե հայտ ներկայացնող մասնակցի երկրում օրենսդրությամբ չի պահանջվում ֆինանսական աուդիտի անցկացումը, ապա, անհատ անձանց սեփականություն հանդիսացող հայտ ներկայացնող ընկերությունները կամ կոնսորցիումի սուբյեկտները կարող են ներկայացնել հավատարմագրված հաշվապահի կողմից հաստատված իրենց հաշվեկշիռները հարկային հաշվետվությունների հետ միասին:

Առաջին 4 տարիների ընթացքում «ինովատոր դառնալու» մասնակցության մեջ գրանցում ունեցող ուսանողների տոկոսային ցուցանիշ

անուն	տոկոսային բաշխում	ազգությունը	սեռաշրջան	փոխանցիկության

Ձև (4Բ)

Առաջին 4 տարիների ընթացքում ՀՀ-ում ոչ ռեզիդենտ մասնագետները և նրանց ֆունկցիաները

(«ոչ ռեզիդենտ» են համարվում այն մասնագետները, որոնք տարվա ընթացքում հանրապետությունում գտնվելու են ոչ ավելի քան 10 ամիս)

անունը	ամիսների թիվը	ազգությունը	պաշտոնը	ֆունկցիաները

(անհրաժեշտության դեպքում շարունակեք լրացուցիչ էջի վրա)

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայտ ներկայացնողի կամ կոնսորցիումի մասնակցի անունը.

Մասնակիցները, ներառյալ կոնսորցիումի մեջ մտնող սուբյեկտները, պետք է ինֆորմացիա տրամադրեն ցանկացած դատական գործի կամ դատավարության վերաբերյալ, որոնք առնչվում են վերջին հինգ տարիների ընթացքում իրականացված կամ ներկայումս իրականացվող պայմանագրերին: Կոնսորցիումի յուրաքանչյուր մասնակցի համար պետք է օգտագործվի առանձին թերթ:

Տարին	Մասնակցի ՕԳՏԻՆ կամ ԴԵՄ կայացված որոշումը	Պատվիրատուի անունը, դատական գործի հարուցման, պատճառը և վիճարկվող հարցը	Վիճարկվող գումարը (ներկա արժեքը ԱՄՆ դոլարի համարժեքով)

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

առաջարկվող պաշտոնը _____

ֆիրմայի անունը _____

մասնագետի անունը _____

մասնագիտությունը _____

ծննդյան օրը և թիվը _____

ֆիրմայում աշխատանքի ստաժը _____ ազգությունը _____

անդամակցությունը մասնագիտական միություններում _____

հանձնարարված ֆունկցիաները _____

_____

Հիմնական որակավորումները

մոտ կես էջի սահմաններում _____

Կրթությունը

մոտ քառորդ էջի սահմաններում _____

Աշխատանքային գործունեությունը

մոտ երկու էջի սահմաններում _____

Լեզուները

յուրաքանչյուր լեզվի համար նշեք լեզվին տիրապետելու աստիճանը _____

Հաստատում

Ես, ներքստորագրյալս, հաստատում եմ, որ իմ խորին համոզմամբ այս տվյալները ճշտորեն նկարագրում են ինձ, իմ որակավորումը և աշխատանքային փորձը: Ես նաև հաստատում եմ, որ իմ ինքնակենսագրական տվյալները իր հայտում ներկայացնելու թույլտվությունը տվել եմ միայն.

[լրացրեք հայտ ներկայացնողի անունը]

_____ ամսաթիվ _____

ֆիրմայի աշխատակցի և ներկայացուցչի ստորագրությունները *օր/ամիս/տարի*

ֆիրմայի աշխատակցի լրիվ անունը _____

լիազոր ներկայացուցչի լրիվ անունը _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ

Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՅԱՆԿ

ՄԱՍ 1 - ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ 4

1.1 Ընդհանուր դրույթներ 4

1.2 Ծրագրի իրականացման կազմակերպումը 5

ՄԱՍ 2 - ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ 7

2.1 Ընդհանուր դրույթներ 7

2.2 Վճարումների կատարումը ՀԲ-ի կողմից 7

2.3 Կառավարման ծառայությունների համար սահմանված հատատարգրված վճարը և խրախուսավճարը 8

ՄԱՍ 3 - ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՔԵԼԸ, ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՀ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 9

3.1 Ներածություն 9

3.2 Մրցույթի հրավերի փաստաթղթերը 9

3.3 Հայտերի մերժումը 10

3.4 Մրցույթի հրավերի և նրա բովանդակության պարզաբանումը 10

3.5 Այցելություններ տեղերում 11

3.6 Տվյալների սենյակ 11

3.7 Մասնակիցների կոնֆերանս 12

3.8 Մրցույթի հրավերում փոփոխություն կատարելը 12

3.9 Ջրտնտպեղեկոմիտեի հետ կապը պարզաբանումներ ստանալու համար 12

3.10 Ջրտնտպեղեկոմիտեի կողմից տրամադրվող ինֆորմացիան 13

3.11 Ժամանակացույցը 13

ՄԱՍ 4 - ԱՌԱՋԱՐԿԻ ՖՈՐՄԱՏԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ 15

4.1 Առաջարկի բովանդակությունը 15

4.2 Տեխնիկական առաջարկ – գլուխ I – Աշխատանքային պլան և տեղեկություններ աշխատանքների մասին 15

4.3 Տեխնիկական առաջարկ – գլուխ II – Հայտային երաշխիքը 16

4.4 Տեխնիկական առաջարկ – գլուխ III – հայտ ներկայացնողի պարտավորագիրը 17

4.5 Տեխնիկական առաջարկ – գլուխ IV – Կոնսորցիումներին ներկայացվող պահանջները և նրանց մասնակցության հետ կապված փաստաթղթերը 18

4.6 Տեխնիկական առաջարկ – գլուխ V – Լիազորագիրը 19

4.7 Տեխնիկական առաջարկ – գլուխ VI – Լրացուցիչ գրականություն 19

4.8 Տեխնիկական առաջարկ - գլուխ VII - Ինֆորմացիա հայտ ներկայացնող ընկերության կամ կոնսորցիումի մասնակիցների մասին 19

4.9 Ֆինանսական առաջարկը 20

4.10 Առաջարկները և կառավարման պայմանագրի նախագիծը 21

4.11 Հայտերը ոչպես պարտավորեցնող առաջարկներ 21

4.12 Հայտերը ներկայացնելու հետ կապված ծախսերը 21

4.13 Գաղտնիության պահպանումը 22

4.14 Ընդունելու կամ մերժելու իրավունքը 22

ՄԱՍ 5 - ՀԱՅՏԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ, ԸՆԴՈՒՆԵԼԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐԵԼԸ 23

5.1 Հայտի ջնջիրը, պատճենները և դրանց ստորագրումը 23

5.2 Տեխնիկական և ֆինանսական առաջարկների գմոռումը և պիտակումը 23

5.3 Հայտեր ներկայացնելու վերջին ժամկետը 24

5.4 Հայտերի վավերականության ժամկետը 25

5.5 Առաջարկում փոփոխություն կատարելը 25

5.6 Առաջարկները հետ վերցնելը 26

ՄԱՍ 6 - ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 28

6.1 Հայտերի բացումը 28
6.2 Տեխնիկական առաջարկների բացումը 28
6.3 Ֆինանսական առաջարկների բացումը 29
6.4 Առաջարկների գնահատումը 29
6.5 Տեխնիկական առաջարկների գնահատումը 29
6.6 Ֆինանսական առաջարկների գնահատումը 33
6.7 Վերահաշվարկը միասնական արժույթի 34
6.8 Առաջարկների ընդհանուր գնահատումը 34
6.9 Հետաքննություն կատարելու և պարզաբանումներ պահանջելու ջրտնտպենտկոմիտեի իրավունքը 34
6.10 Կապը իշխանությունների հետ 35
6.11 Կաշառակերության և մեքենայությունների երևույթների առնչությամբ 35
6.12 Շահերի բախում 36

ՄԱՍ 7 - ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ 37

7.1 Հաջողակ մասնակիցը 37
7.2 Կառավարման պայմանագրի շնորհումը 37
7.3 Կառավարման պայմանագրի ստորագրումը 37
7.4 Կատարողական երաշխիք 38
7.5 Պայմանագիրը չստորագրելու և կատարողական երաշխիք չտրամադրելու հետևանքները 38

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության գործադիր
մարմնի լիազորությունները մասնավոր
կառավարչին փոխանցելու

[ամսաթիվ]